ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. Ն___Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2024-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետին և 83-րդ հոդվածին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Երևանի զարգացման 2024-2028 թվականների հնգամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշմամբ Երևանի զարգացման 2024-2028 թվականների հնգամյա ծրագիրը ենթակա է հրապարակման օրենքով սահմանված կարգով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2023 թվականի դեկտեմբերի -ի N
-Ա որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2024-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Սիրելի՛ երևանցի

Երևան քաղաքի զարգացման վերաբերյալ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության մոտեցումը դու տեսել ես նախորդ հինգ տարիների ընթացքում: Տասնամյակների կուտակված խնդիրների մի մասը մեր թիմը կարողացել է լուծել՝ բազմաբնակարանային շենքերի մուտքերի վերանորոգումից մինչև տրանսպորտային համակարգի ռեֆորմ: Մենք հավատարիմ ենք մեր սկզբունքներին և քաղաքը զարգացնելու, այն մարդկանց համար դարձնելու մեր գաղափարին:

Բարեփոխումների մեր ծրագիրը նախատեսում է Երևան քաղաքի համաչափ զարգացում, որով հավասար հնարավորություններ կստեղծվեն բոլոր վարչական շրջանների բնակիչների համար, և վերջիններս մարդկային կապիտալի զարգացման, ենթակառուցվածքների, հետաքրքիր ժամանց ունենալու և ծառայություններից պատշաճ օգտվելու հնարավորություն կունենան:

Մենք սահմանել ենք քաղաքի զարգացման առաջնահերթություններն իրենց գործողություններով և լուծումներով, որի արդյունքում Երևանը հարմարավետ կլինի բոլոր երևանցիների՝ տարեցների, երեխաների, հատուկ կարիքներ ունեցող մարդկանց, ինչպես նաև քաղաքի հյուրերի և զբոսաշրջիկների համար:

Քաղաքն այդպիսին կարող է դառնալ հավատարիմ մնալով մի պարզ սկզբունքի՝ պահպանել հանրային շահի գերակայությունը անհատական շահի նկատմամբ: Հենց այս բանաձևով պետք է լուծենք բոլոր խնդիրները, իսկ մեր բոլորի հոգատարությունը Երևանի նկատմամբ պետք է դառնա կենսակերպ և զարգացնենք մեր մայրաքաղաքը հենց այս սկզբունքներով հանուն երևանցու:

Սիրելի՛ երևանցի

Մենք անելու ենք ամենը, որպեսզի Երևանը դառնա մարդկա՛նց համար քաղաք, հարմարավետ քաղաք … քաղա՛ք, որտեղ քո՛ ցանկություններն ու պահանջներն առաջնահերթ են:

Տիգրան Ավինյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4
ԵՐԵՎԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5
ԵՐԵՎԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 15
1. ԵՐԵՎԱՆԸ՝ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՀԱՐՄԱՐԱՎԵՏ ՔԱՂԱՔ 18
1.1 Բարեկարգ և հարմարավետ ենթակառուցվածքներով քաղաք 18
1.2 ՏՏ լուծումներով հագեցած քաղաք 21
1.3 Կանաչ լուսավորություն ունեցող քաղաք 26
1.4 Սոցիալապես պաշտպանված քաղաք 26
1.5 Արդյունավետ կոմունալ ծառայություններ ապահովող քաղաք 29
2. ԵՐԵՎԱՆԸ՝ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՔԱՂԱՔ 30
2.1 Կրթված քաղաք 30
2.2 Մշակութային քաղաք 32
2.3 Հասանելի առողջապահություն 33
2.4 Սպորտի և երիտասարդության քաղաք 34
2.5 Մարդակենտրոն քաղաք 35
3. ԵՐԵՎԱՆԸ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔ 36
3.1 Կանաչ և կայուն շրջակա միջավայր ունեցող քաղաք 36
3.2 Հասանելի տրանսպորտային համակարգով քաղաք 39
3.3 Էներգախնայող և էներգաարդյունավետ քաղաք 42
3.4 Միջազգային համագործակցության քաղաք 44
4. ԵՐԵՎԱՆԸ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔ 44
4.1 Զարգացման պոտենցիալ ունեցող քաղաք 44
4.2 Զարգացած առևտրի և ծառայությունների քաղաք 45
4.3 Զբոսաշրջության քաղաք 46
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ 49

ԵՐԵՎԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1918 թվականից Երևանը հանդիսանում է Հայաստանի մայրաքաղաքը և Հայաստանի ողջ պատմության ընթացքում 13-րդն է: Հիմնադրվել է մ.թ.ա. 782թ-ին: Անվանումը ծնունդ է առել ուրարտական Էրեբունի ամրոցի անվանումից, որից էլ սկիզբ է առել Երևան քաղաքը:

Երևանը համարվում է Հայաստանի խոշորագույն կրթական կենտրոնը: Մայրաքաղաքում գործում են բազմաթիվ կրթական օջախներ, մանկապարտեզներ և դպրոցներ (այդ թվում երաժշտական, գեղարվեստի, պարի և այլն), պետական, մասնավոր և միջազգային ԲՈՒՀ-եր:

Քաղաքում են հիմնված բազմաթիվ գրադարաններ, պատկերասրահներ, թատրոններ, կինոթատրոններ, թանգարաններ, Օպերայի և բալետի թատրոնը և այլ մշակութային օջախներ:

Երևանում է գտնվում Հայաստանի Հանրապետության նախագահի նստավայրը, Ազգային ժողովի ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարությունները և պետական կառավարման մարմինները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, զանգվածային լրատվության միջոցների գերկշիռ մասը: Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների գրասենյակները, օտարերկրյա պետությունների ներկայացուցչությունները, արտերկրյա ֆինանսական, հասարակական և մշակութային հաստատությունների հայաստանյան գրասենյակներ, Հայաստանում գործող բանկերն ու ֆինանսական հաստատությունները:

Երևանում են կենտրոնացած նաև ռադիոյի և հեռուստատեսության ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների կենտրոնական գրասենյակները: Ներկայումս Հայաստանում տպագրվող մոտ 200 պարբերականների և հանդեսների մեծ մասը նույնպես հրատարակվում է Երևանում:

Երևանում գործում է Հայաստանի միակ մետրոպոլիտենը, որի ուղիների ընդհանուր երկարությունն է 12.1 կմ, իսկ գործող կայարանների քանակը՝ 10:

Տարածաշրջանային փոխադրումների առումով Երևանը համարվում է կարևորագույն տրանսպորտային և տարանցիկ հանգույցներից մեկը: Երևանում է գտնվում Զվարթնոց միջազգային օդանավակայանը, որը տարվա ընթացքում ունենում է չվերթներ դեպի ավելի քան 40 ուղղություններ: Հայաստան ժամանող զբոսաշրջիկների գերակշիռ մասի համար Երևանը հանդիսանում է առաջին հյուրընկալը: Երևանում է գործում Հայաստանի ամենախոշոր երկաթուղային կայարանը:

Երևանի տնտեսությունը բազմաճյուղ է՝ գյուղմթերքի վերամշակումից մինչև տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաներ: Տնտեսության արագ զարգացող ճյուղերից է առևտրի և ծառայությունների ոլորտը: Շինարարության գերակշիռ մասը Հայաստանի Հանրապետությունում կենտրոնացած է Երևանում:

Երևանում են գտնվում նաև բջջային և համացանցային կապի ոլորտում բարձրակարգ ծառայություններ մատուցող խոշոր ընկերությունների կենտրոնական գրասենյակները:

Այսպիսով, Երևանն իր սոցիալ-տնտեսական ցուցանիշներով հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսության կենտրոնը:

ԵՐԵՎԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի բնակչությունը 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 1098,9 հազ. մարդ՝ մասնավորապես, 2018թ. նկատմամբ աճելով՝ 21.3 հազ-ով (1.9%): Բնակչության մեծամասնությունը էթնիկ հայեր են: Երևանում բնակվում են նաև հույներ, ռուսներ, ուկրաինացիներ, վրացիներ, հրեաներ, իրանցիներ, ասորիներ, եզդիներ, քրդեր և այլ ազգեր:

Քաղաքը զբաղեցնում է 223.0 քառ.կմ տարածք: Բնակչության խտությունն է 4928 մարդ մեկ քառակուսի կիլոմետրի վրա:

Գծապատկեր 1. Երևանի բնակչության թվի դինամիկան 2019-2023թթ.



ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Երևանը ՀՀ-ի խոշորագույն արդյունաբերական կենտրոնն է: Երևանին է բաժին հասնում արդյունաբերության 34.9 տոկոսը (2022թ. հունվար-դեկտեմբեր):

Գծապատկեր 2. Արդյունաբերական ծավալն ըստ արտադրության բաժինների (2022թ. հունվար-դեկտեմբեր)



Թողարկված արտադրանքի ծավալը 2022թ. (հունվար-դեկտեմբեր) թվականին կազմել է 937.216.752 հազ. դրամ: Երևան քաղաքի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքի մեջ հիմնական բաժին են կազմում մշակող արդյունաբերությունը՝ 42.9% և էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը՝ 40.6, իսկ հանքագործական արդյունաբերությունը և բացահանքերի շահագործումը (2.6%), ջրամատակարարումը, կոյուղին, թափոնների կառավարումը և վերամշակումը (1,2%) կազմում են արդյունավերական ծավալի ընդամենը 3.8 տոկոսը:

Մշակող արդյունաբերության մեջ թողարկված արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ են կազմում սննդամթերքի արտադրությունը, հիմնական մետաղների արտադրությունը և խմիչքների արտադրությունը:
2018 թվականից Երևան քաղաքի արդյունաբերական արտադրանքի ծավալը (բացառությամբ 2020թ.) գրանցել է շարունակական աճ:

Գծապատկեր 3. Երևան քաղաքի արդյունաբերական արտադրանքի ծավալը ընթացիկ գներով (հազ. ՀՀ դրամ)



2018-2022թթ. արդյունաբերական արտադրանքի ծավալի աճը կազմել է 27.4%:

Երևան քաղաքում մեկ բնակչին բաժին ընկնող թողարկված արդյունաբերական արտադրանքի ծավալը 2022թ. (հունվար-դեկտեմբեր) կազմել է 855.281 դրամ՝ գրանցելով 25.6 տոկոսի աճ 2018թ-ի նկատմամբ:

Գծապատկեր 4. Միջին հաշվով մեկ բնակչին բաժին ընկնող թողարկված արդյունաբերական արտադրանքի ծավալը ընթացիկ գներով՝ ըստ ՀՀ և Երևանի (ՀՀ դրամ)



	2018	2019	2020	2021	2022 (հունվար-դեկտեմբեր)
ՀՀ	652568	706000	709462	816715	906177
ք. Երևան	680921	727140	665027	752607	855281

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի շինարարության ծավալները 2022թ. (հունվար-դեկտեմբեր) կազմել են ամբողջ հանրապետության ծավալի շուրջ 43.3 տոկոսը (234.231,8 մլն ՀՀ դրամ):

Գծապատկեր 5. Շինարարության ծավալներն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի (2022թ.)



2022թ. (հունվար-դեկտեմբեր) Երևանում շահագործման հանձնված բնակելի շենքերի մակերեսը կազմել է ամբողջ հանրապետությունում շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի շուրջ 45.8 տոկոսը (147.512 քմ):

Գծապատկեր 6. Շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը ք. Երևանում



ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏ

Ծառայությունների մատուցման ոլորտում Երևանը հանդիսանում է առաջատար Հայաստանի Հանրապետությունում: Այս ոլորտը ինչպես Երևանում, այնպես էլ ամբողջ հանրապետությունում կայուն աճ է արձանագրում անկախությունից ի վեր:

Մատուցվող ծառայությունների 86.3%-ը բաժին է ընկնում հենց Երևանին, իսկ մնացած 13.7%-ը՝ հանրապետության տասը մարզերին:

2022թ. (հունվար-դեկտեմբեր) Երևանի ծառայությունների ծավալը կազմել է 2.221.970,2 մլն ՀՀ դրամ:

Գծապատկեր 7. Ծառայությունների ծավալն ըստ ք. Երևանի և ՀՀ (մլն ՀՀ դրամ)



Երևանում ծառայությունների ոլորտի առաջատար ուղղություններն են մշակույթը, զվարճություններն ու հանգիստը, կացության և հանրային սննդի կազմակերպումը, կրթությունը, առողջապահությունը և այլն:

Մեկ բնակչին բաժին ընկնող ծառայությունների մեծությամբ առաջատարը կրկին Երևանն է, որը միջին հանրապետականին գերազանցում է մոտ 2,3 անգամ:

Գծապատկեր 8. Միջին հաշվով մեկ բնակչին բաժին ընկնող ծառայությունների ծավալը 2018-2022թթ. (ՀՀ դրամ)



ԱՌԵՎՏՈՒՐ

Հայաստանի Հանրապետության մանրածախ առևտրի շրջանառության զգալի հատվածը բաժին է ընկնում կրկին Երևանին: Մասնավորապես, 2015թ.՝ շուրջ 76%-ը, 2018թ.՝ շուրջ 74,5%-ը և 2021թ.՝ շուրջ 70%-ը:

Գծապատկեր 9. Երևան քաղաքի մանրածախ առևտրի ծավալի դինամիկան 2018-2022թթ. (մլն ՀՀ դրամ)



Մեկ բնակչին բաժին ընկնող մանրածախ առևտրի թվով առաջատարը նույնպես Երևանն է: 2022թ. (հունվար-դեկտեմբեր) Երևանի մեկ բնակչին բաժին ընկնող մանրածախ առևտրի շրջանառությունը միջին հանրապետականին գերազանցում է համարյա կրկնակի (97%-ով ավելի շատ): 2022թ. Երևանի մեկ բնակչին բաժին ընկնող մանրածախ առևտրի շրջանառությունը կազմել է 1.090.920,4 ՀՀ դրամ:

Գծապատկեր 10. Մանրածախ առևտրի գործող օբյեկտների ապրանքային պաշարները և դրանց ապահովվածությունը՝ ք. Երևանում և ՀՀ մարզերում (մլն ՀՀ դրամ)



ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Երևանի տնտեսության մեջ ամենափոքր բաժինն է կազմում գյուղատնտեսությունը, որը մայրաքաղաքում հիմնականում մասնագիտացված է անասնաբուծության և բուսաբուծության մեջ: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի դինամիկան մայրաքաղաքում վերջին տարիներին գրանցել է որոշակի վայրիվերումներ, մասնավորապես, 12,1 մլրդ ՀՀ դրամից հասել 8,7 մլրդ ՀՀ դրամի, այնուհետև 2022թ. գրանցել է աճ՝ դառնալով 11,7 մլրդ ՀՀ դրամ:

Գյուղատնտեսության երկու հիմնական ճյուղերից Երևանում առաջատար է անասնաբուծությունը՝ շուրջ 83,8% (2022թ. հունվար-դեկտեմբեր):

Գծապատկեր 11. Երևան քաղաքի գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2018-2022թթ. (մլրդ ՀՀ դրամ)


10
9
8
7
6
5
4
3
2
1
0
9.3
2.8
6.8
3.7
6.9
2
7.5
1.8
9.8
1.9
2018
2019
2020
2021
2022
Անասնաբուծություն
Բուսաբուծություն

ԵՐԵՎԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեն եկամուտների գծով կազմում է 118,588,471.1 հազար դրամ: Ընդ որում, Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 86,187,242.9 հազար դրամ՝ ծրագրված 87,478,240.9 հազար դրամի նկատմամբ, կատարողականը կազմել է 98.5%:

Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի միջոցների հաշվին ծրագրված ծախսերը կազմում են 129,892,733.3 հազար ՀՀ դրամ: Ընդ որում, 2022 թվականի փաստացի կատարված ծախսերը կազմել են 94,799,074.4 հազար դրամ՝ կազմելով ճշտված ծրագրի 85.1%-ը:

Երևան քաղաքի բյուջեի ցուցանիշները 2021-2023թթ.

1	Բյուջեի եկամուտները, հազ.դրամ	
2	Բյուջեի ծախսերը, հազար դրամ	

3	Սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների մեջ	
4	Կապիտալ ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտների մեջ	
5	Համայնքի աշխատողների աշխատանքի վարձատրության ծախսերի տեսակարար կշիռը բյուջեի ընդամենը ծախսերի մեջ	
6	Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային եկամուտը, հազ. դրամ	

7	Բնակչության մեկ շնչին ընկնող սեփական եկամուտը, հազ. դրամ	
8	Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային ծախսը, հազ. դրամ	

Տեղական ինքնակառավարման սկզբունքներից է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը: Այդ նպատակով Երևանի պաշտոնական www.yerevan.am կայքում ամենօրյա թարմացման ռեժիմով գործում է Երևան քաղաքի տարեկան ինտերակտիվ բյուջեն, որը հնարավորություն է ընձեռում յուրաքանչյուր շահագրգիռ քաղաքացու առցանց տեղեկացված լինել քաղաքային տնտեսության ֆինանսական շրջանառության մասին: Իրականացվում է Երևանի ավագանու նիստերի առցանց հեռարձակումը www.yerevan.am կայքով: Արդեն իսկ կայացել է քաղաքի կարևորագույն խնդիրների՝ ներառյալ Երևանի բյուջեի, վերաբերյալ հանրային քննարկումների և բաց լսումների ինստիտուտը:

1. ԵՐԵՎԱՆԸ՝ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՀԱՐՄԱՐԱՎԵՏ ՔԱՂԱՔ

1.1 Բարեկարգ և հարմարավետ ենթակառուցվածքներով քաղաք

Վիճակի նկարագրություն		
Ցուցանիշներ	**Ք. Երևան**	
	Չափի միավոր	**2023**
Փողոցների քանակ	միավոր	1100
Փողոցների երկարություն	կմ	955
Փողոցների և հրապարակների ընդհանուր մակերես	քմ	15.343
Վերգետնյա անցումներ	հատ	30
Ստորգետնյա անցումներ	հատ	41
Հուշարձաններ	հատ	404

Նախատեսվող ծրագրեր

Մայրաքաղաքն առավել բարեկեցիկ և հարմարավետ ենթակառուցվածքներով դարձնելու նպատակով 2024-2028թթ. ընթացքում նախատեսվում է փողոցների, մայրուղիների, հրապարակների, բակային տարածքների և այլ ասֆալտապատման կարիք ունեցող տարածքների ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման աշխատանքների իրականացում: Կիրականացվեն տարեկան 50 կմ միջին նորոգման աշխատանքներ՝ այդպիսով նորոգելով Երևանի ամբողջ 271 կմ ճանապարհացանցը:

Նախատեսվում է նաև Երևանի քաղաքային նշանակության փողոցները հանձնել «սպասարկման»: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կապալառու կազմակերպության կողմից իրականացնել Երևան քաղաքի վարչական շրջանների քաղաքային նշանակության փողոցների ճաքալցման, փոսային նորոգման, ճանապարհային երթևկության կազմակերպման տեխնիկական միջոցների (ճանապարհային նշաններ, ուղղաձիգ և հորիզոնական գծանշում՝ մեկ տարի երկարակեցությամբ թերմոպլաստիկ լուսաանդրադարձնող միկրոապակեգնդիկներով) տեղադրման-վերատեղադրման և իրականացման, անվտանգության տարերի տեղադրման-վերատեղադրման (անվահիրիչ, ճաղավանդակ, լուսաանդրադարձիչ և այլ), եզրաքարերի տեղադրման-վերատեղադրման, դիտահորերի բարձրացման և իջեցման աշխատանքներ: Վերոնշյալ աշխատանքները հնարավորություն կտան առաջացող խնդիրների արագ արձագանքում, որակական բարձր հատկանիշներով և ծավալներով փոսային նորոգում, ճաքալցում ինչպես նաև գծանշման աշխատանքների իրականացում:

Կշարունակվեն մայթերի վերանորոգմանև սալիկապատման, հանգստի գոտիների պահպանման, բարեկարգման, նորերի կառուցման, բակային տարածքների մարզասարքերով կահավորման աշխատանքները: Կկառուցվեն և կհիմնանորոգվեն Երևանի բոլոր բակերն իրենց ենթակառուցվածքներով:

Ըստ անհրաժեշտության կրթական, նախադպրոցական, արտադպրոցական, մարզական հաստատությունների շենքերում կիրականացվեն ընթացիկ նորոգման, հարդարման, դռների և լուսամուտների փոխարինման, տանիքների, սանհանգույցների վերանորոգման, ջեռուցման/հովացման, օդափոխության և օդորակման, լուսավորության համակարգերի վերակառուցման աշխատանքներ, կապահովվի շենքերի հասանելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Կշարունակվեն կամուրջների և կամրջային կառույցների դեֆորմացիոն կարերի, ջրահեռացման խողովակների մաքրման, հենարանների և թռիչքային կառուցվածքների զննման, վնասվածքների դեպքում՝ վերանորոգման, բազրիքների, եզրաքարերի, լուսավորության սյուների և այլ էլեմենտների նորոգման, ներկման, երթևեկելի մասերի և մայթերի մաքրման և նորոգման աշխատանքները:

Ավտոտրանպորտի ծանրաբեռնված երթևեկության պայմաններում քաղաքացիների անցուդարձը անվտանգ դարձնելու նպատակով կիրականացվեն հետիոտնային վերգետնյա և ստորգետնյա անցումներ վերանորոգման, ինչպես նաև նոր անցումների կառուցման աշխատանքներ:

Նախապես քարտեզագրվելու և սահմանվելու են գովազդային վահանակների բոլոր պոտենցիալ վայրերը և տեսակները՝ ելնելով քաղաքի համար դրանց նպատակահարմարությունից: Գովազդային տեղերը բաժանվելու են լոտերի և տրամադրվելու են մրցութային կարգով:

Կիրականացվեն փողոցների, այգիների կահավորման աշխատանքներ, մասնավորապես՝ Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների գլխավոր փողոցներում, կենտրոնական այգիներում կտեղադրվեն հայտարարությունների վահանակներ, քաղաքային միջավայրը ներկայացնող կառույցների վերաբերյալ կողմնորոշիչ միասնական ցուցանակներ, մասնավորապես՝ կրթօջախների և տուն-թանգարանների դիմաց, դրոշակազարդման և ձևավորման աշխատանքներ:

Առաջիկա հինգ տարիների ընթացքում ավարտին կհասցվեն Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի մշակման աշխատանքները: Փաստաթուղթը սահմանելու է քաղաքի զարգացման հիմնական քաղաքականությունը և հիմք է հանդիսանալու քաղաքաշինական գործառույթների արդյունավետության բարձրացման և թվայնացման համար:

Մշակվելու, հաստատվելու և կիրառվելու են գոտիավորման և կառուցապատման նախագծեր, որոնք հանդիսանալու են մայրաքաղաքի թաղամասային զարգացման համար քաղաքաշինական փաստաթղթեր:

ՀՀ ՏԿԵ և ՀՀ ԿԳՄՍ նախարարությունների հետ կազմված նախագծային առաջադրանքի հիման վրա լրամշակվելու է նաև Երևան քաղաքի պատմամշակութային հիմնավորման նախագիծը, որը հանդիսանալու է ելակետային հիմք տարածական պլանավորման փաստաթղթերի, մանրամասն հատակագծման և կառուցապատման նախագծերի մշակման համար:

Ավարտին է հասցվելու քաղաքաշինական համալիր թվայնացված համակարգի ներդնումը՝ GIS (աշխարհագրական տեղեկատվական համակարգ): GIS համակարգը ինտեգրված գործելու է Կադաստրի կոմիտեի քարտեզագրական տվյալների հետ: Համակարգը հնարավորություն է տալու թվայնացնել քաղաքային միջավայրի բոլոր շերտերը՝ դրանք հասանելի դարձնելով և՛ մասնագետներին, և՛ հանրությանը:

Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրով Երևանում նախորդ տարիներից (2013թ.-ից) մեկնարկած, միջազգային չափանիշներին համապատասխանող արդեն իրականացված (Դավթաշեն-Աշտարակ,Արշակունյաց պողոտա-Նոր Շիրակ և Արտաշատի խճուղի, Արգավանդ-Շիրակ) ճանապարհների կառուցման շարունակականությունն ապահովելու նպատակով կիրականացվի Երևանի արևմտյան օղակաձև կապի՝ Բաբաջանյան-Աշտարակի խճուղու ճանապարհահատվածի և ավատին կհասցվի Ա.Բաբաջանյան փողոցի 1կմ ճանապարհի շինարարությունը:

Քաղաքի ճանապարհափողոցային ցանցի մաս կազմող, ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության Մ2 (Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման) մայրուղու կարևորագույն մուտքն ապահովող ճանապարհատրանսպորտային հիմնական ուղղության՝ Արշակունյաց պողոտայով առկա և հիմա արդեն զարգացող կառուցապատման խտացմամբ պայմանավորված ինտենսիվ աճող տրանսպորտային հոսքերի կարգավորման և կառավարման համար նշված պողոտայի վրա գտնվող միմյանց հետ փոխկապակցված չորս հանգույցներում՝ (Արշակունյաց պողոտայի, Ագաթանգեղոս և Գրիգոր Լուսավորիչ փողոցների հատման հատվածի (Կրկեսի), Ծ.Իսակովի պողոտայից նոր նախագծային ճանապարհի և Արշակունյաց պողոտայի հատման հատվածի, Արշակունյաց պողոտայի և Գ.Նժդեհի փողոցի հատման հատվածի («Հայրենիք» կինոթատրոնի հրապարակ), Աշխատանքի հրապարակի (Բանվորի արձանի)) պահանջվում են այնպիսի ինժեներական լուծումներ, որոնք չեն խաթարի շրջակա միջավայրը, պատմականորեն ձևավորված քաղաքային լանդշաֆտը՝ քաղաքաշինական անսամբլներն ու հրապարակները: Առաջիկա հինգ տարիների ընթացքում վերոնշյալ հանգույցներից երկուսի կարգավորման նպատակով նախատեսվելու են Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի, Ագաթանգեղոս և Գրիգոր Լուսավորիչ փողոցների հատման՝ Կրկեսին հարակից հատվածում և Արշակունյաց պողոտայի ու Գ.Նժդեհի փողոցի հատման հատվածում («Հայրենիք» կինոթատրոնի հրապարակի) տրանսպորտային հանգույցների կառուցման աշխատանքներ:

Կառուցվելու է Երևանի Ծովակալ Իսակովի պողոտան Արշակունյաց պողոտային միացնող ավտոմայրուղի, որը հանդիսանալու է Լենինգրադյան փողոցից դեպի Ծովակալ Իսակովի պողոտա կառուցված ավտոմայրուղու՝ Մոնթե Մելքոնյան փողոցի տրամաբանական շարունակություն: Ծովակալ Իսակովի պողոտայից սկսվող, նախագծային թաղամասի եզրով և Հրազդան գետի վրայով անցնող նախագծային ճանապարհը միանալու է Արշակունյաց պողոտային՝ երկու պողոտաների միջև ստեղծելով նոր կապ, որը ծառայելու է նաև Կենտրոնի երթևեկության բեռնաթափմանը:

Կկառուցվի Նոր Նորք վարչական շրջանի Գյուրջյան փողոցը Մյասնիկյան պողոտային կապող շուրջ 2325 մ երկարությամբ ճանապարհը և էստակադը, որն էականորեն կնվազեցնի Մյասնիկյան փողոցի խցանումները:

Ավարտին կհասցվի Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ. Հովսեփյան փողոցը Սարալանջ փողոցին կապող 1366 մ երկարությամբ ճանապարհի կառուցումը՝ էականորեն նվազեցնելով Արմենակյան և հարակից փողոցների խցանումները:

Կավարտվեն Երևանի արևելյան շրջանցիկ ճանապարհի կառուցման աշխատանքները՝ այն Մասիսի տրանսպորտային հանգույցը կկապի Վերին Պտղնու տրանսպորտային հանգույցին՝ շրջանցելով Երևանը արևելյան կողմից:

Կկառուցվի Ուլնեցի-Ռուբինյանց ավտոճանապարհի վերջնամասից մինչև Աճառյան փողոց երկաթգծի ծրագրով 3.7 կմ ավտոճանապարհը, որը կնվազեցի Քանաքեռ-Զեյթուն և Նոր Նորք վարչական շրջանները կապող ճանապարհահատվածի ծանրաբեռնվածությունը:

Դավթաշեն վարչական շրջանի կառուցապատման միասնական հատակագծով ձևավորված բազմահարկ բնակելի թաղամասերի ճանապարհափողոցային ցանցի կազմավորումը ամբողջական տեսքի հասցնելու, լիաժեք տրանսպորտային սպասարկում, ինչպես նաև բնակելի թաղամասի բնակչության համար տեղաշարժ ապահովելու նպատակով՝ կկառուցվեն Դավթաշեն վարչական շրջանի Տիգրան Պետրոսյան փողոցին զուգահեռ և Դավթաշենի Սասնա Ծռեր և Տ.Պետրոսյան փողոցների խաչմերուկից դեպի հյուսիս Աղաբաբյան փողոցին կապվող նոր ճանապարհահատվածներ:

Կկառուցվի Երևան քաղաքը Զվարթնոց միջազգային օդանավակայանին կապող այլընտրանքային ճանապարհ, որը օդանավակայանը կկապի Բաբաջանյան-Աշտարակ հատվածին:

Կնախագծվի նոր կամուրջ Հրազդանի կիրճի վրայով, որը կկապի Թբիլիսյան և Եղվարդի խճուղիները: Նոր կամուրջը զգալիորեն կթեթևացնի Արաբկիր և Դավթաշեն վարչական շրջանների երթևեկության ծանրաբեռնվածությունը:

Երևանի Կասկադ համալիրի չկառուցապատված վերնամասում՝ ավելի քան 8 հա տարածքում, ավարտին են հասցվելու Կասկադ համալիրի կառուցման աշխատանքները: Կառուցվելու են մշակութային նշանակության կառույցներ, հանրային գոտիներ, հետիոտն ճեմուղի դեպի մատենադարան և ուսանողական հատված:

1.2 SS լուծումներով հագեցած քաղաք

Երևան քաղաքի թվային փոխակերպումն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով միջազգային լավագույն փորձագետների հետ միասին մշակվել է թվային փոխակերպման ռազմավարություն և գործողությունների հստակ ծրագիր:

Երևան քաղաքի թվային փոխակերպման հնգամյան ռազմավարությունը նախատեսում է զարգացում 5 ուղղություններով.

1. **Թվային ենթակառուցվածքների զարգացում/Smart Environment**

Այս ուղղությամբ նախատեսվում է ոլորտների թվայնացումից և դրա արդյունքում գեներացվող տվյալների ծավալի աճից առաջ զարգացնել սերվերային տնտեսությունը, հզորացնել և ընդլայնել առկա սերվերները, բարելավել դրանց տեղակայման միջավայրը՝ բերելով այն միջազգային ստանդարտներին, ներդնել դրանց գործունեության շարունակելիությունը (**Business continuity**) ապահովող համակարգեր: Կազմակերպել 3-րդ (**Emergency copy**) պահուստային հանգույցի ստեղծումը:

Նախատեսվում է բարելավել ներքին կորպորատիվ ցանցի թողունակությունը, ընդլայնել այն՝ միավորելով ենթակա կառույցները, փոխակերպել ներքին հեռախոսացանցը, դարձնելով այն ամբողջությամբ IP տեխնոլոգիայով գործող, բարելավել և թարմացնել համակարգչային ֆոնդը, ընդլայնել համակարգերի ինտեգրումը փոխգործելիության հարթակի (EKENG **Interoperability platform**) հետ:

2. **Կանաչ քաղաք/Green City**

Կանաչ քաղաք գործողությունների ծրագրով նախատեսվում է զարգացում հետևյալ ուղղություններով՝

- ✓ Աղբահանության կառավարում
- ✓ Վտանգավոր թափոնների կառավարում
- ✓ Էներգախնայողությանն ուղված կառավարման համակարգերի ներդրում
- ✓ Երթևեկության կառավարման համակարգի ներդրում
- ✓ Վերահսկողական մեխանիզմների և գործիքակազմերի ներդրում

3. **Անվտանգ քաղաք/Safe City**

Քաղաքացիական և բնակչության պաշտպանություն

- ✓ Վաղ ազդարարման համակարգի զարգացում
- ✓ Հակահրդեհային պաշտպանության զարգացում
- ✓ Բնակչության տարհանման պլանավորման բարելավում

Աղետների ռիսկերի կառավարում

- ✓ Ռիսկերի գնահատման և մոդելավորման գործիքակազմի ներդրում
- ✓ ԱՌԿ պլանավորման գործիքակազմի ներդրում
- ✓ Ռեսուրսների կառավարման գործիքակազմի ներդրում
- ✓ Դիմակայունության կարողությունների զարգացում

Անվտանգության մշակույթ

- ✓ Անվտանգության վերաբերյալ իրազեկման և ուսուցման գործիքակազմի ներդրում

Անվտանգության համակարգեր

- ✓ Տեսահսկման ցանցի ընդլայնում
- ✓ Տեսապատկերի վերլուծության գործիքակազմի ներդրում

4. **Շարժունակության զարգացում/Mobility**

- ✓ Երթևեկության կառավարում
- ✓ Հասարակական տրանսպորտի կառավարում
- ✓ Միասնական տոմսային համակարգ
- ✓ Ուղևորների և վարորդների տեղեկատվական հարթակներ

5. **Խելացի կառավարում/Smart Governance**

Երևանի քաղաքապետարանը ենթակառուցվածքների թվայնացման, գործառույթների ավտոմատացման և էլեկտրոնային ծառայությունների ընդլայնման համար կիրառում է եռաշերտ թվայնացման սկզբունքը, այն է՝



Փոխգործակցության արտադեմ են հանդիսանում Երևանի քաղաքապետարանի 2 մասնաշենքերում և 12 վարչական շրջաններում գործող «Մեկ պատուհան» գրասենյակները, որտեղ քաղաքացիները տալիս են դիմումներ և ստանում պատասխաններ թղթային տեսքով, սակայն գրասենյակի աշխատակիցը թղթային կրիչով դիմումը քաղաքացուց վերցնելուց հետո այն թվայնացնում է և մուտքագրում համակարգ: Մյուս փոխգործակցության ուղղությունը դա ինտերնետ միջավայրում տրամադրվող էլեկտրոնային ծառայություններն են, պաշտոնական կայքի և այլ հարթակների միջոցով, որտեղ քաղաքացին ինքնուրույն է մուտքագրում իր դիմումը, ստանում պատասխաններ, կատարում վճարումներ: Փոխգործակցության ևս մեկ ուղի է հանդիսանում 1-05 թեժ գծի ծառայությունը, որտեղ զանգի միջոցով ստացվող տեղեկատվությունը ևս մուտքագրվում է համապատասխան հարթակ և ընթացք ստանում:

Ծրագրային հենքեր են հանդիսանում այն ծրագրային լուծումները, որոնք ուղղված են Փոխգործակցության արտադեմից ստացված հայտերի կամ ներքին գործառույթներից բխող գործընթացների ավտոմատացմանը:

Վերլուծական գործիքների գործունեությունը կազմակերպվում է ծրագրային հենքերում կուտակվող տվյալների վերլուծության հիման վրա, որոնք կիրառվում են որոշումների ընդունման գործընթացին աջակցելու նպատակով:

Ներքևի նկարում պատկերված է թվային փոխակերպման ռազմավարության իրականացման ճարտարապետությունը, որտեղ 1, 2, 3-ը հիմնական թվայնացման շերտերն են, 2-ում՝ քաղաքային տնտեսության ոլորտները նկարագրող վեցանկյուններում նշված դեղինով GIS, իսկ կանաչով IoT գրված մակագրությունները և 4-ը ինտեգրման ենթաշերտերն են: 2-ի վեցանկյուններում գրված թվերը սպիտակով՝ գործող և դեղինով՝ պահանջվող համակարգերի թվային ցուցանիշներն են:



Թվային փոխակերպման հնգամյա ծրագրով նախատեսվում է նկար 2-ում դեղինով նշված բոլոր ոլորտներում ներդնել պահանջվող համակարգերը՝ ամբողջությամբ թվայնացնելով քաղաքապետարանի բիզնես գործընթացները և ենթակառուցվածքները, գործարկել վերլուծական կենտրոնը, կառուցել քաղաքային կառավարման կենտրոնը, ապահովել դրանց սպասարկումը և զարգացումը: Հաշվի առնելով, որ այս ծրագրի առաջնահերթ նպատակն է ստեղծել քաղաքացիակենտրոն, հարմարավետ և մատչելի միջավայր քաղաքացու հետ փոխգործակցության ապահովման և տրամադրվող ծառայությունների որակը էապես բարելավելու համար, ուստի նպատակահարմար է ուժերը և ռեսուրսները այս փուլում ուղղել փոխգործակցության արտադեմի (Front Office) զարգացմանը՝ միաժամանակ ապահովելով դրանց հիմնական ֆունկցիոնալությունն ապահովող ծրագրային հենքերի ներդրումը և զարգացումը:

Թվային փոխակերպման շերտ	Նախագծի անվանում	2024	2025	2026	2027	2028
ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴԵՄ FRONT OFFICE	1.«**E-Services**» Էլեկտրոնային ծառայությունների միասնական հարթակ					
	2.Քաղաքային խնդիրների տեղեկացման և բնակչության հետ փոխգործակցության հարթակ					
ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԵՆՔԵՐ BACK OFFICE	1.**GIS** տարածատեղեկատվական միասնական հարթակ, տարածական տվյալներ մշակող 10 ոլորտների համար					
	2.Քաղաքաշինական թույլտվությունների տրամադրման բիզնես պրոցեսների ավտոմատացման հարթակ					
	3.Առևտրային թույլտվությունների տրամադրման բիզնես պրոցեսների ավտոմատացման հարթակ					
	4.Մարդկային ռեսուրսների կառավարման (**HRM**) միասնական հարթակ քաղաքապետարանի և ենթակա շուրջ 470 կառույցների համար					
	5.Համայնքի նկատմամբ պարտավորությունների ինքնաշխատ հաշվառման և ծանուցումների տրամադրման հարթակ					
	6. Երթևեկության կառավարման համակարգ					
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ANALITYCS	1.Քաղաքային կառավարման կենտրոնի ստեղծում (**City Command and Control center**) տրամադրվող ծառայությունների որակի 24/7 վերահսկման և միջադեպերի արագ արձագանքման համար					
	2. **BIG DATA** խոշոր տվյալների հարթակ. առկա, ներդրվող և **IoT** համակարգերից տվյալների կուտակում և վերլուծություն					

Ռազմավարության իրականացման ընթացքում համագործակցելու ենք Համաշխարհային Բանկի (World BANK), ՄԱԶԾ-ի (UNDP), «ՋԻ ԱՅ ՋԵԹ»-ի (GIZ) GmbH), գործընկեր քաղաքների և այլ ընկերությունների հետ:

Համաձայն ռազմավարության՝ առաջնահերթ ներդրվելու է քաղաքացիներին ծառայությունների (ավելի քան 150) մատուցման միասնական հարթակ և մեքենայացված ուսուցման գործիքներով հագեցված հարմարավետ բջջային հավելված:

Ծառայությունները ներառելու են հարկեր/տուրքերի վճարումներից, բոլոր տեսակի թույլտվությունների ստացումից մինչև երեխայի՝ պարզեցված կարգով մանկապարտեզում հերթագրվելը:

Արտաքին գովազդի թույլտվությունները ևս տրամադրվելու են առցանց: Առցանց հարթակի միջոցով տնտեսվարողները հնարավորություն կունենան էլեկտրոնային եղանակով ուղարկել հայտեր և ստանալ Երևան քաղաքում արտաքին գովազդի տեղադրման թույլտվություն: Հնարավորություն կտրվի նաև էլեկտրոնային եղանակով վճարել արտաքին գովազդի համար նախատեսված տեղական տուրքի գումարները:

2026, 2027, 2028 թվականներին նախատեսվող թվային փոխակերպման համակարգերի ներդրումները կհստակեցվեն այդ ժամանակաշրջանների առաջնահերթությունների բացահայտումով:

Քաղաքային ծառայությունների որակի վերահսկման, միջադեպերի արագ արձագանքման և որոշումների ընդունման աջակցման նպատակով նախատեսվել է ստեղծել 24/7 ռեժիմով գործող քաղաքային կառավարման կենտրոն:

1.3 Կանաչ լուսավորություն ունեցող քաղաք

Հին նատրիումային տիպի լուսատուները ամբողջությամբ փոխարինվելու են նոր ԼԵԴ լուսատուներով՝ ապահովելով ամբողջ քաղաքի էներգաարդյունավետ լուսավորությունը գիշերային ժամերին:

Կառուցվելու են արևային կայաններ, որոնք հնարավորություն կտան օգտագործել արևային էներգիան քաղաքի լուսավորության համար:

Ստեղծվելու է թվային կառավարման համակարգ, որը նվազեցնելու է էլեկտրաէներգիայի ծախսը և վթարների քանակը:

Շարունակվելու է փողոցներում առկա վերգետնյա մալուխների՝ ստորգետնյա անցկացման աշխատանքները: Երևան քաղաքում նոր ճանապարհներ կառուցելիս մալուխներն այսուհետ անցկացվելու են միայն ստորգետնյա ճանապարհով:

1.4 Սոցիալապես պաշտպանված քաղաք

Վիճակի նկարագրություն		
Ցուցանիշներ	**ք. Երևան**	
	Չափի միավոր	**2023**
Սոցիալական աջակցության կարիք ունեցող	ընտանիք	5359
Սոցիալական աջակցության կարիք ունեցող	անձ	22396

Զբաղվածության ծրագրերի շահառուներ	անձ	110
Պատերազմում տուժած, վիրավորում ստացած, հաշմանդամություն ձեռք բերած, մասնակցած, պատերազմից տուժած	ընտանիք	66
Հաշմանդամություն ունեցող անձ	անձ	200
Անօթևաններ	անձ	100
Տարեցներ /ինչպես նաև հաշմանդամություն ունեցող/ տնային խնամքի և բարեգործական ճաշարանի ծառայություններից օգտվող	անձ	657
Արցախից բռնի տեղահանված	ընտանիք	10698 /շուրջ/
Արցախից բռնի տեղահանված	անձ	40657 /շուրջ/
Որդեգրման ենթակա	երեխա	15
Որդեգրել ցանկացող	անձ	38
ԱԾԽՄ /առանց ծնողական խնամքի մնացած/ թվին պատկանող	երեխա/ անձ	28
Խնամատար	ընտանիք	15
Խնամատար ընտանիքներում խնամվող	երեխա	19

Նախատեսվող ծրագրեր

Երևան քաղաքում երեխաների և սոցիալական պաշտպանության համակարգի արդյունավետ կառավարման, որակյալ սոցիալական ծառայությունների և զբաղվածության ծրագրերի կազմակերպման, կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցության, սոցիալական ծառայությունների ներդրման և իրականացման նպատակով շարունակվելու են իրականացվել կյանքի որակի բարելավմանն ուղղված սոցիալական ծրագրեր խոցելի խմբերի համար (բազմազավակ ընտանիքներ, հաշմանդամություն ունեցող անձինք, տարեցներ, երեխաներ, պատերազմից տուժած ընտանիքներ, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներ):

Սոցիալական ծրագրերում առաջնահերթություն է տրված ԼՂՀ պաշտպանության մարտական գործողությունների հետևանքով, մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած), հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամներին: Հաշվի առնելով ՀՀ-ում ստեղծված իրավիճակը՝ Արցախից բռնի տեղահանված ընտանիքների համար նախատեսվելու են ծրագրեր՝ ուղղված սոցիալական աջակցության տրամադրմանը, ներառմանն ու ինտեգրմանը:

Կիրականացվեն աշխատանքներ ուղղված տարեցների սոցիալական խնդիրների լուծմանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևան համայնքը խիտ բնակեցված լինելու պատճառով առանձնանում է իր սոցիալական խնդիրներով, ուստի թիրախային ծրագրերի

մշակման և իրականացման միջոցով աջակցություն կտրամադրվի բազմազավակ, երիտասարդ և այլ ընտանիքներին պատկանող խմբերին:

Կշարունակվի բնակչության զբաղվածության խթանումը՝ սոցիալական գործընկերության և ձեռներեցության համատեքստում մասնագիտական ուսուցման և համապատասխան գործիքների տրամադրման միջոցով:

Արդիական է նաև արտակարգ իրավիճակներում և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին /օրինակ՝ COVID, ռազմական դրության, շենքերի փլուզման և այլն/ աջակցության տրամադրումը, որը ևս մշտապես վարչության ծրագրերում համարվում է առաջնային:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետության քաղաքականությունը միտված է համայնքահեն ծրագրերի իրականացմանը, իսկ Երևան համայնքում նախատեվող համայնքահեն սոցիալական ծառայություններ մատուցող կենտրոնները կարող են համայնքի ռեսուրսներն արդյունավետ կերպով կառավարելու նախադրյալ դառնան և ապահովեն հասցեական սոցիալական ծառայությունների մատուցման գործընթացը, ուստի անհրաժեշտ է Երևան համայնքում ունենալ համայնքահեն ծառայություններ մատուցող կառույցներ, որոնք կնպաստեն նաև ԿԴԻՀ երեխաների և նրանց ընտանիքների կյանքի որակի բարելավմանն ու կենսամակարդակի բարձրացմանը, ընտանիքների հզորացմանը, մանկալքության կանխարգելմանը: Այս նպատակով կարևոր է նաև համագործակցությունը բոլոր շահագրգիռ կազմակերպությունների միջև:

Կարևոր է ընդգծել, որ համակարգի ներդրման համար կարևոր բաղադրիչ է համարվում սոցիալական աշխատանքի, տեղական սոցիալական պլանավորման, սոցիալական ծառայությունների մոնիթորինգի և գնահատման գործառույթների ուժեղացման և թվայնացման անհրաժեշտությունը /տեղեկատվական բազայի առկայությունը/, որի ուղղությամբ իրականացվում են համապատասխան աշխատանքներ: Այսպիսով, կհիմնվեն համայնքային նոր սոցիալական ծառայություններ, արագ արձագանքման կարիք ունեցող խոցելի խմբերին անհրաժեշտ ծառայությունների մատուցումը կազմակերպելու նպատակով, ինչպես նաև երեխաների և սոցիալական պաշտպանության համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով կիրականացվեն շարունակական վերապատրաստումներ համայնքի համապատասխան աշխատակիցների, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների համար:

Աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման, նոր սոցիալական ծրագրեր պլանավորելու և իրականացնելու համար նախատեսվում է շարունակական համագործակցություն հասարակական, միջազգային և այլ կազմակերպությունների հետ:

Երեխաների իրավունքների ոտնահարման կանխարգելման լավագույն միջոցներից մեկն է սեփական իրավունքների մասին իրազեկվածությունը՝ իրավագիտակից քաղաքացիներ ձևավորելու նպատակով: Ելնելով վերոնշյալից՝ նախատեսվում է հանրակրթական դպրոցներում սովորող երեխաների շրջանակներում իրականացնել իրենց

իսկ իրավունքների և շահերի պաշտպանության վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

Երեխաների պաշտպանության համատեքստում, առանձնակի շեշտադրելով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների պաշտպանությունը, կարևորվում է ԿԴԻՀ երեխաների ինտեգրումը քաղաքի մշակութային կյանքին:

Աշխատանքներ կտարվեն խնամատարության ինստիտուտի շարունակական զարգացման և երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն աջակցման նպատակով:

1.5 Արդյունավետ կոմունալ ծառայություններ ապահովող քաղաք

Վիճակի նկարագրություն		
Ցուցանիշներ	**ք. Երևան**	
	Չափի միավոր	**2023**
Բազմաբնակարան շենք	հատ	5083
Վերելակներ	հատ	4770
Բազմաբնակարան բնակելի շենքերի հարթ տանիքների մակերես	քմ	1312990
Բազմաբնակարան բնակելի շենքերի թեք տանիքների մակերես	քմ	2372238
Մուտքեր	հատ	13157

Նախատեսվող ծրագրեր

Առաջիկա հինգ տարիների ընթացքում, ըստ առաջնահերթության, կփոխարինվեն վթարային վիճակում գտնվող մնացած բոլոր 2688 վերելակները:

Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագրի շրջանակում առաջիկա հինգ տարիների ընթացքում կառուցվելու է եվրոպական չափորոշիչներին համապատասխան կենցաղային թափոնների քաղաքային նոր աղբավայր: Կոնսերվացվելու է գործող աղբավայրը և ստեղծվելու է կոշտ կենցաղային թափոնների վերամշակման ենթակառուցվածք:

Թափոնների տեսակավորման ոլորտում քաղաքում կավելացվեն տեսակավորման կետերն՝ 140-ից հասցնելով առնվազն 300-ի, կավելացվի նաև վերամշակելի թափոնների տեսակը՝ ներառելով ալյումինե թափոնների համար նախատեսված տարաները: Տեսակավորման համար նախատեսված թափոնամաններ կտեղադրվեն բոլոր դպրոցներում:

Կիրականացվեն իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ՝ աղբի տեսակավորման մշակույթը կենցաղում ներդնելու ուղղությամբ:

Շարունակական բնույթ են կրելու աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարձրացման աշխատանքները:

Կկարգավորվի շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և տեղադրման գործընթացը, կսահմանվեն համապատասխան վայրերում աղբի տեղափոխման և տեղադրման կարգերն ու կանոնները:

Առաջնահերթության կարգով կիրականացվի Հաղթանակ, Սիլիկյան և Նոր Խարբերդ թաղամասերի ջրամատակարարման ցանցի արդիականացման և անհատական տնային միացումների ծրագիրը՝ 167 կմ երկարությամբ:

Երևան քաղաքի ջրահեռացման համակարգի արդիականացման ծրագրի շրջանակում կմեկնարկեն չկոյուղացված թաղամասերի և փողոցների կոյուղու անցկացման աշխատանքները՝ մայրաքաղաքի 83 հասցեներում, շուրջ 90 կմ երկարությամբ: Շարունակաբար կիրականացվեն շուրջ 350 հասցեներում 70 կմ երկարություն ունեցող խնդրահարույց կոյուղագծերի վերակառուցման, իսկ 39 հասցեներում 14 կմ երկարություն ունեցող կոյուղագծերի նորոգման աշխատանքներ:

Տարբեր վարչական շրջաններում կմեկնարկեն գազամատակարարման մագիստրալի և բաշխիչ արտաքաղաքային և ներքաղաքային նոր ցանցի կառուցման աշխատանքները՝ հաշվի առնելով Երևան քաղաքում բնակելի և հասարակական կառուցապատման աճող ծավալներով պայմանավորված գազի սպառման պահանջարկի կտրուկ ավելացումը:

Մինչև 2025 թվականն ավարտին կհասնցվի բազմաբնակարան շենքերի կառավարման (համատիրությունների) մասին նոր օրենքի ընդունումը և կառավարման արդյունավետ մոդելի ներդնումը:

Շարունակական բնույթ կկրի հարթ և թեք տանիքների և շքամուտքերի վերանորոգման ծրագիրը:

Կիրականացվեն Երևանյան լճի խորքային ջրհեռի փականային հանգույցի և մակերևութային ջրթողի վերակառուցման և վերազինման աշխատանքները:

2. ԵՐԵՎԱՆԸ՝ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՔԱՂԱՔ

2.1 Կրթված քաղաք

Վիճակի նկարագրություն		
Ցուցանիշներ	**Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ**	
	Չափի միավոր	**2023**
Դպրոց	**հատ**	**152**
Հիմնական դպրոց	հատ	140

Միջնակարգ դպրոց	հատ	11
Կրթահամալիր	հատ	1
Աշակերտների թիվ	սովորող	106068
Նախադպրոցական ուսումնական հաստատություն	հատ	162
Երեխաների թիվ	երեխա	26192
Նախակրթարանների թիվ	հատ	11
Երեխաների թիվ	սան	170

Նախատեսվող ծրագրեր

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների կրթական միջավայրի բարելավման շրջանակում հիմնանորոգվելու է 68 և կառուցվելու է 4 նոր մանկապարտեզ Արաբկիր, Կենտրոն, Ավան, Շենգավիթ վարչական շրջաններում՝ մանկապարտեզ հաճախելու հնարավորություն ընձեռելով Երևանի մանկապարտեզահասակ բոլոր երեխաների համար: 2026 թվականին Երևանի մանկապարտեզներից ոչ մեկն այլևս հիմնանորոգման կարիք չի ունենա:

Զուգահեռաբար ապահովվելու է նախադպրոցական ուսումնական հաստատությունների գույքի նորացումը, տրամադրվելու է կոշտ գույք, կենցաղային տեխնիկա, բարեկարգվելու են հիմանորոգված մանկապարտեզների բակային տարածքները՝ կահավորելով խաղահրապարակներ:

Նախադպրոցական կրթության մատչելիության ապահովման շրջանակում կձևավորվեն հավելյալ մսուրային խմբեր՝ ապահովելով երեխաների սոցիալիզացիան ավելի վաղ տարիքից, ինչպես նաև հնարավորություն տալով ծնողներին վերադառնալ մասնագիտական գործունեությանը: Վերջինիս իրացմանն աջակցելու նպատակով մանկապարտեզներում կընդլայնվի նաև երկարօրյա ծառայության մատուցման ծավալը:

Երևանյան մի շարք դպրոցներում կձևավորվեն նոր նախակրթարաններ՝ 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթությունն այլընտանքային եղանակով կազմակերպելու նպատակով:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում կբարելավվի ուսումնական միջավայրը՝ ներդրված և գործարկվող համընդհանուր ներառական կրթության շրջանակում բոլոր երեխաների համար ապահովելով հավասար հնարավորություններ և կրթության մատչելիություն: Մրցունակ կրթության ապահովման նպատակով կբարելավվեն ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործմամբ ուսումնական գործընթացների կառավարման գործընթացները, կխթանվի ուսումնական գործընթացում էլեկտրոնային կրթական ռեսուրսների կիրառման լավագույն փորձը:

Երևանի ենթակայության դպրոցների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով իրականացվելիք հիմնանորոգման և վերակառուցման ծրագրերին զուգահեռ՝ լրացուցիչ ֆինանսավորման շրջանակում կձեռնարկվեն շենքերի պահպանման և վթարավերականգնողական աշխատանքներ:

Սովորողների արժեքային համակարգի և կարողունակությունների ձևավորման գործընթացին աջակցելու շրջանակում կկազմակերպվեն ռազմամարզական, հայրենաճանաչողական ուղղվածությամբ ճամբարներ և արշավներ, տարբեր ծրագրերի միջոցով կխրախուսվի աշակերտական խորհուրդների ակտիվությունը, սովորողների նախաձեռնողականությունը, ներգրավվումը հասարակության արդի հիմնախնդիրների շուրջ

քննարկումներին: Օժտված երեխաների հայտնաբերման և խրախուսման նպատակով կկազմակերպվեն առարկայական օլիմպիադաներ,

Ուսումնական հաստատությունների անձնակազմի կարողությունների զարգացման նպատակով կանցկացվեն մասնագիտական կարողությունների զարգացման դասընթացներ, փորձի փոխանակման միջոցառումներ:

2.2 Մշակութային քաղաք

Վիճակի նկարագրություն		
Ցուցանիշներ	**ք. Երևան**	
	Չափի միավոր	**2023**
Թանգարան	հատ	5
Թատրոն	հատ	3
Գրադարան	հատ	19
Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ	հատ	26
Գեղագիտական զարգացման և մշակույթի տներ	հատ	13
Մանկական ֆիլհարմոնիաներ	հատ	2
«Երևան» փողային նվագախումբ	հատ	1
«Հայ Արտ» մշակույթի կենտրոն	հատ	1

Նախատեսվող ծրագրեր

Մշակույթի և արվեստի տարբեր ուղղությունների պատշաճ ներկայացվածության, մշակութային կյանքի հագեցվածության, բազմազանության, որակի ապահովման նպատակով առաջիկա հինգ տարիների ընթացքում կիրականացվեն կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր և միջոցառումներ: Մասնավորապես, շարունակվելու է մշակութային հաստատությունների հիմնանորոգման, վերանորոգման և արդիականացման ծրագրերի իրականացումը: Հիմնանորոգվելու են Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնը և Մանկապատանեկան ստեղծագործության քաղաքային կենտրոնը:

Շարունակաբար իրականացվելու են մշակութային ժառանգության պահպանմանը, ժամանակակից արվեստի զարգացմանը, մշակութային կազմակերպությունների և ինքնազբաղ արվեստագետների գործունեության աջակցմանն ուղղված ծրագրեր: Բացի այդ, իրականացվելու են ծրագրեր՝ ուղղված Երևան քաղաքում նոր մշակութային միավորների և ենթակառուցվածքների ձևավորման գործընթացների խթանման, գործող ենթակառուցվածքների կենսունակության և շարունակական զարգացման համար նպաստավոր պայմանների ապահովման, մշակութային կյանքի հագեցվածության և բազմազանության ապահովման, արվեստի և մշակույթի տարբեր ոլորտների ներկայացուցիչների փոխգործակցության միջոցով մշակութային նոր ծառայությունների մատուցման և արտադրանքի ստեղծման խթանման նպատակով:

Կազմակերպվելու են ծրագրեր՝ մշակույթի և մշակութային կյանքի տարածքային համաչափ զարգացման, Երևան քաղաքի հանրային տարածքներում մասսայական-մշակութային ծրագրերի իրականացման խրախուսման, մշակութային նախաձեռնություններին աջակցելու, ոլորտում մրցակցային միջավայրի ձևավորման արդյունավետ մեխանիզմների ներդրման, մշակութային միջոցառումների, այդ թվում՝ փառատոների իրականացման երկարաժամկետ պլանավորման ապահովման, դրանց որակի, միջազգային ճանաչման և հեղինակության բարձրացմանն ուղղված գործողությունների իրականացման, համաշխարհային մշակութային գործընթացներին մշակութային կյանքի ինտեգրման, Երևանի՝ որպես համաշխարհային և տարածաշրջանային մշակութային կենտրոններից մեկի կերպարի ձևավորման ուղղությամբ:

2.3 Հասանելի առողջապահություն

Վիճակի նկարագրություն		
Ցուցանիշներ	**Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ**	
	Չափի միավոր	**2023**
Առողջապահական հիմնարկ	**հատ**	**23**
Բժշկական կենտրոն, այդ թվում	հատ	4
- Մասնագիտացված հիվանդանոց	հատ	1
- Ընդհանուր պրոֆիլի հիվանդանոց /ներառյալ պոլիկլինիկական ծառայություն/	հատ	2
- Ընդհանուր պրոֆիլի բժշկագիտական կենտրոն	հատ	1
Շտապօգնության ծառայություն	հատ	1
Ծննդատուն	հատ	1
Պոլիկլինիկա	հատ	15

Նախատեսվող ծրագրեր

Առողջապահական համակարգի կառավարման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացման նպատակով մինչև 2025 թվականը հիմնանորոգման և շահագործման են հանձնվելու ևս 7 պոլիկլինիկա:

Վաղ շրջանում հիվանդությունների հայտնաբերման և դրանց հետագա բարդությունների կանխարգելման և արդյունավետ բուժման նպատակով կշարունակվի նաև բուժհաստատությունների տեխնիկական հագեցումը, այդ թվում՝ վերազինում ժամանակակից պահանջներին համապատասխանող բժշկական սարքվորումներով, պարագաներով և գույքով, ինչպես նաև կիրականացվի բնակչությանը դժվարամատչելի հետազոտությունների

և ծառայությունների տրամադրումը: Կիրականացվեն առողջ ապրելակերպի քարոզչության, սքրինինգային կամ այլ բժշկական ծրագրեր:

Շարունակական բնույթ է կրելու շտապօգնություն ծառայության արդիականացումը, թվայնացվելու է կանչերի ծառայությունը, իսկ շտապօգնության ավտոպարկը համալրվելու է նոր մեքենաներով:

Առողջապահական գրագիտության բարձրացման և կարողությունների զարգացման նպատակով Երևանի ենթակայության բուժհաստատություններում իրականացնելու ենք համապատասխան մասնագետների վերապատրաստում:

Երևան ենթակայության «Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ն նախատեսվում է դարձնել ժամանակակից բոլոր ստանդարտներին համապատասխանող խոշոր բազմապրոֆիլ բժշկական կենտրոն:

2.4 Սպորտի և երիտասարդության քաղաք

Վիճակի նկարագրություն		
Ցուցանիշներ	**ք. Երևան**	
	Չափի միավոր	**2023**
Մարզական կազմակերպություններ	հատ	36
Աշխատակից	մարդ	959
Երեխաներ	մարդ	9 358

Նախատեսվող ծրագրեր

Երևան համայնքի ենթակայությամբ գործող մարզական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով կշարունակվի մարզադպրոցների ժամանակակից սպորտային սարքավորումներով ապահովումը:

Կկառուցվի Ալբերտ Ազարյանի անվան միջազգային ստանդարտներին համապատասխանող նոր մանկապատանեկան մարզադպրոցը, իսկ Շենգավիթ համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցում կկառուցվի նոր լողավազան: Գործարանային մետրոյի կայարանի հարևանությամբ կկառուցվի Երևան քաղաքի մենապայքարային մարզաձևերի բարձրագույն վարպետության մարզադպրոցը, ինչը հնարավորություն կտա մեր հավաքականների հաջողությունները ամրապնդել և զարգացնել:

Առողջ ապրելակերպի արմատավորման ու ներդաշնակ ֆիզիկական զարգացման իրականացման, մայրաքաղաքում տարբեր մարզաձևերի մասսայականացման և զարգացման նպատակով կկազմակերպվեն բազմաթիվ մարզական միջոցառումներ, որոնք կներառեն նաև հաշմանդամություն ունեցող անձանց հետ անցկացվող միջոցառումներ:

Ամենամյա կտրվածքով Երևան քաղաքում կանցկացվեն «Երևան օփեն» միջազգային մրցաշարեր մի շարք մարզաձևերով:

Արտադպրոցական դաստիարակության միջոցով կշարունակվի երիտասարդ սերնդի շրջանակում առողջ ապրելակերպի խթանումը:

Վարչական շրջաններում, ընդհանուր առմամբ կկառուցվեն 14 նոր համալիր մարզաձևերի մարզադպրոցներ, որոնցում ընդգրկված կլինեն խաղային, մենապայքարային և կիրառական մարզաձևեր:

Էրեբունի և Շենգավիթ վարչական շրջաններում առկա հին լողավազանները հիմնովին կվերանորոգվեն՝ արդյունքում ձևավորելով Երևան քաղաքի ջրային մարզաձևերի մարզադպրոցը:

Ամենամյա կտրվածքով Երևան քաղաքում կանցկացվի «Երևան-մարաթոն» միջազգային վազքի մրցաշարը:

2.5 Մարդակենտրոն քաղաք

Երևան համայնքը, կարևորելով քաղաքացիների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությունն ու ներգրավվածությունը հանրային նշանակություն ունեցող որոշումների կայացման գործընթացում, տարբեր ծրագրերի և նախաձեռնությունների շրջանակում մշտապես համագործակցում է տարբեր ոլորտներում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների հետ:

Երևանը 2022 թվականի մայիսի 17-ին դարձավ «Տեղական բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության անդամ: 2022 թվականի դեկտեմբերի 27-ին ավագանու հ. 692-Ա որոշմամբ ընդունվեց ««Տեղական բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակում Երևանի 2023-2024թթ. գործողությունների ծրագիրը»: Գործողությունների ծրագրի շրջանակում Երևանը ստանձնեց 3 հանձնառություն, որոնց իրականացմամբ համայնքը կունենա առավել բաց, թափանցիկ և մասնակցային հանրային քննարկումներ, համայնքային ծառայողների շրջանում կիրականացվեն իրազեկման և կարողությունների զարգացմանն ուղղված դասընթացներ բարեվարքության համակարգի ներդրմանն ընդառաջ, Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում կստեղծվի ոլորտային համալիր տեղեկատվություն պարունակող և տեղեկատվական հասանելիություն ապահովող «Կանաչ զարգացում» հարթակի ստեղծում:

Համայնքային կառավարման և ժողովրդավարական գործընթացների ոլորտներում որոշումների կայացման մասնակցային գործընթացում բնակիչների, երիտասարդների ներգրավումը նպատակ ունի աջակցել մարդակենտրոն քաղաքականության ձևավորմանը, քաղաքացիների շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացմանը և հաշվետու հանրային կառավարմանը՝ համայնք-բնակիչ ընդլայնված երկխոսության միջոցով: Երևանի քաղաքապետարանում հանրային լսումների իրականացման գործընթացի թափանցիկությունն ապահովելու, ինչպես նաև քաղաքացիներին և այլ շահագրգիռ կազմակերպություններին իրազեկելու համար նախքան հանրային բաց լսումներն

իրականացնելն օրենքով սահմանված կարգով հանրային քննարկումների վերաբերյալ հայտարարությունը հրապարակվում է ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական (www.e-draft.am) կայքում, Երևան քաղաքի պաշտոնական (www.yerevan.am) կայքում, ինչպես նաև համապատասխան օրաթերթում: Սակայն այդ գործընթացի վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու և առավել արդյունավետ իրականացնելու համար «Տեղական ԲԿԳ» նախաձեռնության շրջանակներում նախատեսվել է այն դարձնել առավել թափանցիկ, քաղաքացիների համար առավել հասանելի, հաշվետվողական: Այս համատեքստում նախատեսվում է կիրառել հավելյալ միջոցներ Երևանի քաղաքապետարանի բոլոր 12 վարչական շրջաններում՝ քաղաքացիների մոտ համայնքային գործընթացների վերաբերյալ հետքրքրվածությունը բարձրացնելու նպատակով: «Տեղական ԲԿԳ» նախաձեռնության շրջանակում նախատեսվում է նաև «Կանաչ զարգացում» հարթակի ստեղծում, որն իրենից ներկայացնում է վեբ հաշվետվություն ջերմոցային գազերի արտանետումների, օդի աղտոտվածության մակարդակի, դրանց՝ շրջակա միջավայրի ազդեցության վերաբերյալ: Այն արտացոլվելու է քաղաքապետարանի կողմից բացասական ազդեցությունը նվազեցնելու համար ձեռնարկված միջոցառումների, ծրագրերի իրականացման միջոցով: Այս գործողությամբ ակնկալվում է ստեղծել հնարավորություն ծանոթանալու քաղաքապետարանի կողմից էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում իրականացված ծրագրերին, ստանալ էներգետիկայի ոլորտում իրականացված ծրագրերի արդյունքում կրճատված էներգետիկ ցուցանիշներ:

3. ԵՐԵՎԱՆԸ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔ

3.1 Կանաչ և կայուն շրջակա միջավայր ունեցող քաղաք

Վիճակի նկարագրություն		
Ցուցանիշներ	**ք. Երևան**	
	Չափի միավոր	**2023**
Քաղաքային նշանակության այգի	միավոր	88
Կանաչապատ տարածքներ	հա	6760
Ընդհանուր օգտագործման կանաչապատ, այդ թվում՝ ընդլայնված և բարելավված տարածք	հա	872,8
Տնկված ծառատեսակներ	հատ	5050
Տնկված թփեր, այդ թվում կենդանի ցանկապատ	հատ	135000
Տնկված ծաղիկներ (վարդեր, միամյա և բազմամյա ծաղկատեսակներ)	հատ	320000
Ծառերի և թփերի քարտեզագրման աշխատանքներ	հատ	12700

Մեկ բնակչին բաժին ընկնող կանաչապատ տարածք	ք.մ	8
Կանաչ տարածքների գույքագրում	հա	15
Ծառերի և թփերի գույքագրում	հատ	12500
Ոռոգման ցանցի երկարություն	կմ	340
Ոռոգման ցանցի նոր կառուցված ջրագիծ	կմ	25
Վերամշակվող թափոնների տեսակավորում	տոննա	346
Հավաքված թափառող շներ	հատ	2352
Ստերջացված թափառող շներ	հատ	1281
Կատաղության դեմ պատվաստումներ	հատ	601
Որդեգրված շներ	հատ	62

Նախատեսվող ծրագրեր

Երևան քաղաքի բնապահպանական քաղաքականության հիմնական նպատակը մայրաքաղաքի շրջակա բնական միջավայրի պահպանությունը, պաշտպանությունը և բարելավումն է՝ քաղաքային տնտեսության կայուն, առողջ և համաչափ զարգացման և բնակչության բարեկեցության ապահովման համար:

Կանաչ տարածքների բարելավման և ընդլայնման, մթնոլորտային օդի աղտոտման նվազեցման և հողերի էրոզիայի կանխման նպատակով առաջիկա հինգ տարիների ընթացքում կիրականացվեն մի շարք ծրագրեր:

Հաշվի առնելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության չափորոշիչները, որոնց համաձայն մեկ անձին ընկնող կանաչ տարածքների նվազագույն մակերեսը 9 քմ է, առաջիկա հինգ տարիների ընթացքում Երևանի կանաչ տարածքներն ավելացվելու են՝ հասնելով և անցնելով նվազագույնի շեմը:

Դալմայի այգիներում առկա 230 հա-ից ավել տարածքում հիմնվելու է նոր քաղաքային այգի՝ բացառելով որևէ կառուցապատում այդ տարածքում, իսկ Նորքի նախկին այգիներում առկա շուրջ 10 հա տարածքում տնկվելու է անտառ՝ ստեղծելով բուֆերային գոտի և մասնակիորեն վերականգնելով այդ տարածքի կանաչապատ հատվածը: Վերականգնվելու է «Փարոսի» անտառտնկարկը՝ որպես ամբողջական էկոհամակարգ:

Մայրաքաղաքում և մայրաքաղաքը գոտևորող հարակից տարածքներում կստեղծվի կանաչ տնկարկներով պաշտպանիչ շերտ (բուֆերային անտառպաշտպանիչ գոտի), որը կնպաստի ընդհանուր էկոլոգիական վիճակի բարելավմանը:

Կառուցապատումների պարագայում շինարարական թույլտվությունների պարտադիր պայման է սահմանվելու կանաչ տարածքների և խաղահրապարակների առկայությունը՝ սահմանված նորմերին համապատասխան:

Առաջիկա հինգ տարիների ընթացքում վերականգնվելու և արդիականացվելու է Երևանի ոռոգման համակարգի կեսից ավելին՝ շուրջ 120 կմ նոր ցանցի անցկացմամբ, իսկ երկարաժամկետ հեռանկարում արդիականցվելու և հնարավորինս ավտոմատացվելու է ոռոգման ամբողջ ցանցը, այն հասցնելով շուրջ 500 կմ-ի:

Մեկ միասնական GIS (աշխարհագրական տեղեկատվական համակարգ) միջավայրում ամփոփվելու են Երևանի բոլոր վարչական շրջաններում առկա ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների վերաբերյալ տվյալները: Ամփոփման արդյունքում Երևանում կունենանք ամբողջական պատկեր առկա կանաչ տարածքների, դրանց տեղադիրքի, ոռոգման համակարգի և հարակից ենթակառուցվածքների վերաբերյալ: Բոլոր աշխատանքներն իրականացվելու են բարձր ճշտության մասնագիտական սարքավորումներով, որոնք կապահովեն տվյալների ամբողջականությունը:

2023թ. մեկնարկած ծառերի անձնագրավորման գործընթացը ամբողջությամբ կավարտվի:

Վերոնշյալ ժամանակահատվածում արդիականացվելու է ջերմոցատնկարանային տնտեսությունը՝ կառուցելով նոր ջերմատուն, արտադրական ծավալներն ավելացվելու են՝ արտադրելով տարեկան շուրջ 10.000 ծառ և շուրջ 1 մլն թուփ և ծաղիկ: Այդպիսով կապահովվի Երևանի կանաչ տարածքներում պահաջվող բուսազանգվածի հիմնական մասը:

Կանաչ տնկարկներում առկա կենսունակությունը կորցրած կամ դրա ավարտին մոտ գտնվող ծառերը կփոխարինվեն ավելի արժեքավոր և գեղազարդ տեսակներով: Կընտրվեն կայուն, արժեքավոր, գեղազարդ և Երևանի բուսաբանական կազմին հարիր ծառատեսակներ՝ հաշվի առնելով դրանց տնկման տարածքի միկրոկլիման և բնակլիմայական պայմաններն ու առանձնահատկությունները, աղմուկի, գազերի, փոշու և այլ աղտոտիչների նկատմամբ:

Կիրականացվի բակային տարածքների բուսազանգվածի երիտասարդացում և լրացում, կավելացվեն կանաչ ցանկապատերը և թփերը, կկիրառվեն ուղղաձիգ կանաչապատման մոտեցումները:

Թարմացվելու է կանաչապատման ոլորտում օգտագործվող ավտոտրանսպորտային պարկը, ձեռք են բերվելու նոր ջրցան մեքենաներ, ավտոաշտարակներ, տրակտորներ, հատուկ մասնագիտացված տեխնիկաներ:

Երևանյան լճի և Հրազդան գետի ջրերի մաքրությունը կենցաղային աղբից և կոյուղաջրերից ապահովելու նպատակով Հրազդան գետի վրա կտեղադրվի ևս երկու աղբաորսիչ հարմարանք, կկառուցվի կոլեկտոր:

Հրազդանի կիրճին բնապահպանական կարգավիճակ շնորհելու նպատակով իրականացվելու է տարածքի կենսաբազմազանության գույքագրում, թեմատիկ քարտեզագրում, բնապահպանական արժեքների բացահայտում, որը հիմք կհանդիսանա Հրազդանի կիրճին բնապահպանական կարգավիճակ շնորհելու ՀՀ կառավարության համապատասխան որոշման ընդունման համար:

Ամբողջական տվյալներ ձեռք բերելու և իրավիճակին ճիշտ արձագանքելու նպատակով՝ մինչև 2024թ. ավարտը բոլոր վարչական շրջաններում տեղադրվելու են օդի որակի մոնիթորինգի սենսորային սարքեր:

Իրականացվելու է Երևանի կենդանաբանական այգու 30-40 %-ով ընդլայնում՝ ազատ տարածքների հաշվին, որի արդյունքում հնարավորություն կընձեռվի իրականացնել այգու բարելավում, կենդանիների համար համապատասխան պայմանների ապահովում:

Էլեկտրոմոբիլների առանձնացված ավտոկայանատեղիների սահմանմանը և լիցքավորման կայանների տեղադրման տեխնիկական և իրավական հիմքերի մշակմանը զուգահեռ՝ սահմանվելու են էլեկտրամոբիլների լիցքավորման կետերի կառուցման պարտադիր պահանջներ՝ նորակառույց շենքերի շինթույլտվությունների տրամադրման համար:

Մշակվելու և իրագործվելու է հեծանվային և էլեկտրական ինքնագլորների ցանցի կանոնակարգման ռազմավարությունը և գործողությունների պլանը:

Կմշակվի Կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանության գործողությունների ծրագիր, որի իրականացմամբ քաղաքը կկատարի իր առջև դրված հանձնառությունը և մինչև 2030 թվականը 30 %-ով կկրճատի CO_2 արտանետումները:

Շարունակվելու է կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման, հարմարվողականության, էներգաարդյունավետության, վերականգնվող էներգիայի կիրառմանն առնչվող միջոցառումների իրականացումը, որոնք ուղղված են Երևանի քաղաքային ենթակառուցվածքների էներգաարդյունավետության բարելավման և շրջակա միջավայրի պահպանության երկարաժամկետ ռազմավարության իրականացմանը՝ նպատակ ունենալով նվազեցնելու CO2-ի արտանետումները:

Միջազգային առաջատար փորձի վրա հիմնվելով՝ կուսումնասիրվեն շենք-շինությունների ճակատային հատվածի մշակման արդյունքում հատուկ ներկերով պատելու եղանակով մթնոլորտում առկա արտանետումների կլանման հնարավորությունը:

Շրջակա միջավայրին առնչվող տեղեկատվական հասանելիություն ապահովելու նպատակով կստեղծվի «Կանաչ զարգացում» տեղեկատվական հարթակը:

3.2 Հասանելի տրանսպորտային համակարգով քաղաք

Վիճակի նկարագրություն		
Ցուցանիշներ	**Քաղաք. Երևան**	
	Չափի միավոր	**2023**
Ավտոբուսների քանակը, որից ըստ մակնիշների և տարեթվերի՝	հատ	991
ՄԱՆ (2022թ.)	հատ	87
ԺՈՆԳԹՈՆԳ (2021-2022թ.)	հատ	361
ԳԱԶԵԼ ՍԻԹԻ (2020թ.)	հատ	100
ՀՈՒՆԴԱԻ (2010-2017թ.թ.)	հատ	133
ՋԻՋԻԱՆԳ (2013թ.)	հատ	14
ՀԻԳԵՐ (2011թ.)	հատ	249
ԲՈԳԴԱՆ (2005-2007թ.թ.)	հատ	24
ՊԱԶ (2005-2008թ.թ.)	հատ	9

Տրոլեյբուսների քանակը, որից ըստ մակնիշների և տարեթվերի՝ ՅՈՒԹՈՆԳ (2022թ.) ԼԻԱԶ (2007-2008թ.թ.) ՇԿՈԴԱ (1987-1988թ.թ.)	հատ հատ հատ հատ	56 15 34 7
Մետրոպոլիտենի վագոնների քանակը	հատ	45

Նախատեսվող ծրագրեր

Երևանի հասարակական տրանսպորտի ոլորտի համակարգային բարեփոխումների շրջանակներում, կարևորելով մայրաքաղաքում գործող երթուղային ցանցի արդյունավետության բարձրացման և նոր երթուղային ցանցի ստեղծման անհրաժեշտությունը, ներդրվելու է Երևանի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանց և նոր միասնական տրանսպորտային համակարգ՝ վերանայելով երթուղիները, նախատեսելով նոր, ժամանակակից շարժակազմերի ձեռքբերում, միասնական տոմսային էլեկտրոնային համակարգի ներդրում, զեղչային համակարգերի կիրառում՝ արդյունքում ունենալով ուղևորների սպասարկման որակի զգալի բարձրացում:

Գործող կանգառասրահները փոխարինվելու են նոր, «խելացի» լուծումներով վերազինված կանգառասրահներով և անհրաժեշտ կահավորմամբ, ըստ անհրաժեշտության վերանայվելու է նաև կանգառասրահների տեղադիրքը, ինչպես նաև իրականացվելու է կանգառասրահների համալրում:

Շարունակաբար թարմացվելու և արդիականացվելու է ավտոբուսների և տրոլեյբուսների շարժակազմերը՝ նախապատվություն տալով էլեկտրական և էկոլոգիապես մաքուր տրանսպորտի ձեռքբերմանը: Ապահովվելու է ավտոբուսների և մետրոյի չվացուցակի հասանելիությունը կանգառասրահներում, կայքի և բջջային հավելվածի միջոցով: Արդիականացվելու և վերազինվելու են վերգետնյա էլեկտրատրանսպորտի քարշի ենթակայանները, ինչպես նաև վերակառուցվելու է հպակային ցանցը, փոխարինվելու են ցանցի հենասյուները, ձեռք են բերվելու 3 նոր ավտոաշտարակներ:

Էլեկտրաբուսների շահագործումն ու ապահով պահպանումն իրականացնելու նպատակով՝ Երևանի Բագրատունյաց 44 և Թևոսյան 12 հասցեներում գործող տրոլեյբուսային հավաքակայաններում կառուցվելու է էլեկտրալիցքավորման կայան և 420 մետր երկարությամբ պարիսպ: Դեպոների տանիքներին կտեղադրվեն նաև արևային ֆոտովոլտային կայաններ:

Մշակվելու է Երևան քաղաքի շրջանցիկ ճանապարհների կառուցման հայեցակարգը, որը հնարավորություն կտա բեռնաթափել Երևան քաղաքի տրանսպորտային միջոցների հոսքերը:

Ստեղծվելու է մոնիթորինգային կենտրոն և միասնական տվյալների բազա երթևեկության հոսքերի կառավարման, իրական ժամանակում արտակարգ պատահարների մշտադիտարկման և համակարգված որոշումների ընդունման համար:

Հիմնվելու է տրանսպորտային միջոցների հոսքերի կառավարման համակարգ, խելացի երթևեկության կառավարման միջոցով կառավարվելու է մեքենաների հոսքը՝ կրճատելով խցանումները:

Կառուցվելու է ավտոբուսների կայանման և սպասարկման համար նախատեսված թվով 4 վերգետնյա էլեկտրատրանսպորտի հավաքակայաններ:

Շարունակական բնույթ է կրելու ավտոբուսների համար առանձնացված գծերի ներդրման գործընթացը: Արդիականացվելու են հասարակական տրանսպորտի գործող երթուղիները՝ ավելացնելով դրանց սպասարկման ծածկույթը:

Շարունակվելու է հանրային տրանսպորտի մատչելիության ապահովվումը՝ հաշմանդամություն ունեցող և մանկասայլակով անձանց համար, ինչպես նաև հանրային տրանսպորտի վարորդների վերապատրաստման գործընթացի իրականացումը՝ սահմանված ստանդարտների, վարվեցողության կանոնների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող ուղևորներին համապատասխան օժանդակություն տրամադրելու ընթացակարգերի ուղղությամբ: Ապահովվելու է վարորդների արտահագուստը՝ համաձայն սահմանված նորմերի:

Երևան համայնքում ավտոմոբիլների ինտենսիվ աճի պայմաններում ճանապարհափողոցային ցանցի ծանրաբեռնվածության թեթևացման, շրջակա միջավայրի և օդի աղտոտվածության նվազեցման, տրանսպորտային գործունեության արդյունավետության բարձրացման ու զարգացման, էկոլոգիապես մաքուր, անվտանգ էլեկտրական (ստորգետնյա և օդային) տրանսպորտային միջոցների գրավչության բարձրացման, բնակչության տեղաշարժը (նաև ժամանակի կրճատմամբ) հեշտացնելու նպատակով նախաձեռնվելու են մետրոպոլիտենի զարգացման և այլընտրանքային կապերի ստեղծման աշխատանքներ: Մասնավորապես, առաջիկա հինգ տարիների ընթացքում ավարտին է հասցվելու մետրոյի «Աջափնյակ» կայարանի կառուցումը, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան տանող մետրոյի կայարանի նախագիծը, «Սուրմալու» և «Փեթակ» առևտրի կենտրոնների հատվածում նոր կայարանի կառուցումը, «Երիտասարդական» կայարանի երկրորդ մուտքի շինարարությունը, որը դուրս կգա Աբովյան-Սայաթ-Նովա խաչմերուկի հարակից տարածքում: Կհիմնվի նոր ճոպանուղային ցանց Աջափնյակ-Ծիծեռնակաբերդ-Պռոշյան ուղեգծով:

Մետրոպոլիտենի անխափան և անվտանգ աշխատանքի ապահովմանն նպատակով՝ նախատեսվում է արդիականացնել մետրոպոլիտենի 16 վագոն՝ 5 գլխամասային, 11 միջանկյալ: Կիրականացվեն նաև դեպոյի վերանորոգման և արտադրամասի վերանորոգման, ազդանշանային և հեռահաղորդակցության համակարգի արդիականացման, այդ թվում՝ թվային վերահսկման սարքով հագեցած ազդանշանային բլոկավորման համակարգի փոխարինման, կարգավարական և թունելային կապի համակարգերի արդիականացման, 6 կվ և 825 Վ մալուխների փոխարինման, մետրոպոլիտենի բաց հատվածի լուսավորության

հիմնանորոգման, հեռակառավարման բաժանիչների վահանակների փոխարիման և արդիականացման, ռելեների պաշտպանության համակարգի արդիականացման, համակցված քաշային ենթակայանների վերանորոգման և արդիականացման, գերավազքով աշխատող թվով 14 շարժասանդուղքների վերանորոգման կամ փոխարինման աշխատանքներ: Իրականացվելու են թունելային հակահրդեհային և ջրամատակարարման խողովակաշարերի նորոգման, ուղեգծերի սպասարկման և վերանորոգման աշխատանքներ:

Նախատեսվում է իրականացնել «Մարշալ Բաղրամյան» կայարանի նախասրահի վերանորոգում, «Սասունցի Դավիթ», «Զորավար Անդրանիկ» կայարանների գծային պատերի հիմնանորոգում, կայարանների արտաքին տեսքի բարելավում, ինչպես նաև ձեռք բերել նոր ավտոդրեզին և բեռնատար ավտոմեքենա:

Երթևեկության կարգավորման նպատակով կիրականացվի ճանապարհային նշանների և հետիոտնային կանչի լուսացույցների ձեռք բերում: Կներդրվի լուսացույցների նոր համակարգ, որը հնարավորություն կտա բոլոր լուսացույցների կառավարումը իրականացնել նույն համակարգից, ինչը կնպաստի ավելի մատչելի դարձնելու լուսացույցների նորոգումը և սպասարկումը:

Ճանապարհային ներկերով տրանսպորտային գծանշումները կփոխարինվեն մնայուն սառը կամ թերմո պլաստիկով:

3.3 Էներգախնայող և էներգաարդյունավետ քաղաք

Վիճակի նկարագրություն		
Ցուցանիշներ տեղադրված արևային կայանների և ջրատաքացուցիչների	**ք. Երևան**	
	Չափի միավոր	**2023**
97 բազմաբնակարան բնակելի շենք	կՎտ	690
Երևանի քաղաքապետարանի 2 վարչական շենք	կՎտ	310,56
5 մանկապարտեզ - թիվ 36 մանկապարտեզ - թիվ 49 մանկապարտեզ - թիվ 71 մանկապարտեզ - թիվ 47 մանկապարտեզ - թիվ 48 մանկապարտեզ	 կՎտ կՎտ կՎտ կՎտ կՎտ	 22,05 21,0 22,05 20,0 25,2
Շենգավիթ վարչական շրջանի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց	կՎտ	29,7

Նախատեսվող ծրագրեր

Առաջիկա հինգ տարիների ընթացքում էներգետիկ կառավարման համակարգի ներդրմամբ իրականացվելու է համայնքի տարածքում էներգետիկ հոսքերի ցուցանիշների (տեխնոլոգիական, տնտեսական, սոցիալական և բնապահպանական) համակարգված և

մշտական վերահսկումը և կառավարումը՝ սկսած էներգիայի ձեռքբերման և/կամ արտադրության, փոխակերպման գործընթացներից մինչև էներգիայի վերջնական սպառումը, ապահովելու է համայնքի էներգետիկ կառավարման կայունությունը՝ նվազագույնի հասցնելով գործող համակարգերի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ապահովելով նաև զգալի տնտեսական օգուտներ համայնքային բյուջեին:

Երևանի քաղաքապետարանի ենթակայության կազմակերպությունների շենքերում և շինություններում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումների համակարգումը, հարմարավետությունն անհրաժեշտ մակարդակի բերումն ու էներգաարդյունավետության ներուժի գնահատումը, վառելիքաէներգետիկ ռեսուրսների և ջրի սպառման վերահսկումն ու մոնիտորինգ իրականացումն ապահովելու նպատակով կներդրվի էներգիայի կառավարման տեղեկատվական համակարգ (EMIS), որը կհամեմատի շենքի ջերմատեխնիկական տվյալներն ու էներգիայի և ռեսուրսների սպառման վերաբերյալ ցուցանիշները, կիրականացնի էներգաարդյունավետության ցուցանիշների մոնիթորինգ, ինչպես նաև հնարավորություն կտա ինքնաշխատ կերպով կազմել շենքում և այլ օբյեկտներում էներգիայի սպառման, էներգախնայողության և ջերմոցային գազերի արտանետումների (կրճատման) մասին տվյալներ:

Կձևավորվեն և շարունակաբար կթարմացվեն համայնքային ենթակայության հասարակական շենք շինությունների, բակային ու փողոցային լուսավորության համակարգերի և տրանսպորտի ոլորտում էներգետիկ տվալների շտեմարանները: Էներգաարդյունավետ արդիականացման համար նպատակահարմար օբյեկտների ընտրության համար կսահմանվեն չափորոշիչներ և մեխանիզմներ: Էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղած միջոցների նպատակային օգտագործման համար կստեղծվի շրջանառու հիմնադրամ:

Էներգետիկ կառավարիչների և էներգետիկ պատասխանատուների վերապատրաստման նպատակով կկազմակերպվեն և կիրականացվեն ուսումնական ծրագրեր:

Համայնքային ենթակայության կազմակերպություններում, մանկապարտեզներում, մարզադպրոցներում, մանկապատանեկան կենտրոններում էներգաարդյունավետության և հարմարավետության մակարդակի բարձրացմանն ուղղված կիրականացվեն միջոցառումներ՝ դեռևս շինարարության նախագծման փուլում կշեշտադրվի շենքերի ջերմամեկուսացման, արևային վահանակներով, ջրատաքացուցիչներով վերազինման կարևորությունը:

Էներգաարդյունավետության բարձրացման և սեյսմիկ ամրացման ծրագրի շրջանակում նաև քաղաքապետարանի ենթակայության 32 մանկապարտեզներում և 6 պոլիկլինիկաներում կիրականացվեն էներգաարդյունավետության բարձրացման և սեյսմիկ ամրացման աշխատանքներ, որոնց արդյունքում կկրճատվեն հանրային շենքերի էներգետիկ սպասարկման ֆինանսական ծախսերը, տեղի կունենա արտանետվող CO_2 գազի նվազեցում, ինչպես նաև կբարձրանա սեյսմիկ զինվածության մակարդակը:

3.4 Միջազգային համագործակցության քաղաք

Վիճակի նկարագրություն		
Ցուցանիշներ	**ք. Երևան**	
	Չափի միավոր	**2023**
Քույր և գործընկեր քաղաքներ	հատ	53
Միջազգային Կազմակերպություններ	հատ	8
Հուշագրեր, համաձայնագրեր, պայմանագրեր	հատ	15

Նախատեսվող ծրագրեր

Մայրաքաղաքի գործընկերային հարաբերությունների ընդլայնման նպատակով կկնքվեն մի շարք քաղաքների հետ համագործակցության համաձայնագրեր, առկա համաձայնագրերի շրջանակում կապերի կակտիվացվեն: Երևանը կներկայացվի իբրև մշակութային խոշոր կենտրոն, որի նպատակն է բարձրացնել Երևանի հանրաճանաչելիությունը, ներգրավել օտարերկրյա ներդրումներ, ինչպես նաև աջակցել գբոսաշրջության գարգացմանը:

Շարունակական բնույթ կկրեն եղբայրության պուրակների և զբոսայգիների հիման ծրագրերը:

Միջազգային համագործակցության շրջանակում քույր և գործընկեր քաղաքների հետ համատեղ կմշակվեն ծրագրեր և կիրականացվեն միջոցառումներ:

Քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև քաղաքապետարանի ենթակայության հաստատությունների աշխատակիցների համար համագործակցության շրջանակում կկազմակերվեն վերապատրաստումներ և կտրամադրվի փորձագիտական աջակցություն:

4. ԵՐԵՎԱՆԸ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔ

4.1 Զարգացման պոտենցիալ ունեցող քաղաք

Ժամանակակից աշխարհի զարգացմանը համընթաց շարժվելու, մարտահրավերներին դիմակայելու, լավագույն փորձը և նորարարական ծրագրերը տեղայնացնելու նպատակով նախատեսվում է կիրառել մեխանիզմներ քաղաքի մրցակցային առավելությունների ընդգծման, ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորման, իրականացվող ներդրումների ծավալների մեծացման, ինչպես նաև Երևան քաղաքի՝ որպես գրավիչ և մրցունակ ներդրումային ուղղության ճանաչման համար:

Զուգահեռ կիրականացվեն նաև աշխատանքներ՝ ներդրումային միջազգային ցուցահանդեսներին, ֆորումներին, բարձր վարկանիշ ունեցող միջազգային միջոցառումներին քաղաքի ներկայացվածության ապահովման, գործընկեր քաղաքներում ներդրումային շնորհանդեսների կազմակերպման, փորձի փոխանակման դասընթացների կազմակերպման ուղղությամբ:

Առաջիկա հինգ տարիների ընթացքում կձեռնարկվեն համապատասխան միջոցներ քաղաքում առկա անավարտ, չիրացված, փաստացի չօգտագործվող, անբարեկարգ և նմանատիպ անշարժ գույքերի պատշաճ օգտագործման ապահովման, անհրաժեշտության դեպքում՝ նշված գույքերի մասով հանրային գերակա շահի ճանաչման և ներդրումային այլ ծրագրերում օգտագործելու գործընթացի իրականացման ուղղությամբ:

Քաղաքի առջև ծառացած մարտահրավերներին դիմակայելու համար մեծ կարևորություն են ներկայացնում նաև կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարական և գործողությունների ծրագրերի մշակումն ու իրականացումը: Այս համատեքստում իրականացման ակտիվ փուլում են գտնվում արդեն իսկ մշակված ծրագրերը, իսկ զարգացման նոր տեսլականի ձևավորման ուղղությամբ քաղաքը համագործակցում է տեղական և միջազգային լավագույն կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և փորձագիտական խմբերի հետ:

4.2 Զարգացած առևտրի և ծառայությունների քաղաք

Վիճակի նկարագրություն		
Ցուցանիշներ	**ք. Երևան**	
	Չափի միավոր	**2023**
Առևտրի օբյեկտներ	հատ	8125
Հանրային սննդի օբյեկտներ	հատ	2628
Կենցաղային ծառայություններ մատուցող օբյեկտներ	հատ	2677
Հյուրանոցային համալիրներ	հատ	202
Գյուղական արտադրանքի շուկաներ/տոնավաճառներ	հատ	14
Սպառողական ապրանքների տոնավաճառներ	հատ	10
Սգո սրահների քանակ	հատ	22
Հանրային սննդի ժամանակավոր սեզոնային ծառայություն կազմակերպող տնտեսվարողների քանակ	հատ	353

Նախատեսվող ծրագրեր

Երևան քաղաքում դեռևս կարելի է հանդիպել ապօրինի առևտուր իրականացնող անձանց, որոնց գործունեության արդյունքում տուժում են նույն ոլորտում օրենքի շրջանակներում իրենց գործունեությունն իրականացնող տնտեսվարողները, առաջանում են առողջապահական ռիսկեր, քանի որ ապօրինի առևտուրը հաճախ իրականացվում է

սանիտարական կանոնների խախտմամբ, տուժում է մայրաքաղաքի տեսքը, խոչընդոտվում է երևանցիների ազատ տեղաշարժը:

Նշված խնդիրները լուծելու նպատակով՝ առավել մեծ ռեսուրսներ են տրամադրվելու՝ ուղղված ապօրինի առևտրի դեմ պայքարին, քաղաքացիների շրջանում ապօրինի առևտրի բացասական կողմերի և հետևանքների մասին պատմող լայն իրազեկման աշխատանքներ են իրականացվելու:

Շարունակվելու է առևտրի և ծառայությունների ոլորտի թույլտվությունների հայցման և տրման թվայնացման գործընթացները, ինչը կհանգեցնի տնտեսվարողների աշխատանքի հարմարության և արդյունավետության, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցման և թափանցիկության բարձրացմանը:

Քանի որ Երևան քաղաքում չկան կենդանիների շուկաներ՝ շատ հաճախ մայրաքաղաքի փողոցներում իրականացվում է կենդանիների վաճառք, որն առաջացնում է օրենսդրական պահանջների խախտում, ինչպես նաև հակասանիտարական վիճակ, ուստի նախատեսվում է առաջիկա տարիներում կառուցել կենդանիների շուկա:

Մայրաքաղաքում քաղաքակիրթ առևտուր կազմակերպելու, հետիոտնի ազատ տեղաշարժը ապահովելու նպատակով առաջիկայում միջոցներ կձեռնարկվեն չգործող, լքյալ, հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը լրացած, ոչ հարիր տեսք ունեցող կրպակների ապամոնտաժման ուղղությամբ: Առաջնահերթությունը կտրվի կանաչ տարածքներում և մայթերի վրա տեղադրված կրպակների ապամոնտաժմանը:

Շարունակական բնույթ է կրելու նաև շաբաթ, կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպումը:

4.3 Զբոսաշրջության քաղաք

Վիճակի նկարագրություն		
Ցուցանիշներ	**ք. Երևան**	
	Չափի միավոր	**2023**
Հյուրանոցային ծառայություններ մատուցող կազմակերպություններ	հատ	594
Կացության համարներ	հատ	5041
Խոշոր առևտրի կենտրոններ	հատ	19
Զբոսաշրջային այցելություններ	հոգի	1.9 մլն
Ռեստորաններ և սրճարաններ, արագ սննդի կետեր	հատ	1330
Ժամանցի կենտրոններ	հատ	13

Նախատեսվող ծրագրեր

Երևան քաղաքի զբոսաշրջության զարգացման նպատակով կմշակվի Երևան քաղաքի բրենդը, որն էլ ավելի ճանաչելի կդարձնի Երևանը համաշխարհային շուկայում: Կստեղծվի քաղաքի բրենդավորման մշակումը գնահատող խորհուրդ, որը բաղկացած կլինի ոլորտը ներկայացնող անվանի մասնագետներից: Առաջարկվող նախագծերը կներկայացվեն նաև հանրային քննարկումների:

Պետական մարմինների հետ համագործակցությամբ Զվարթնոց օդանավակայանում կստեղծվի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն, որը հնարավորություն կստեղծի զբոսաշրջիկների համար տեղեկատվություն ստանալ տրանսպորտի, ենթակառուցվածքների, մշակութային այցելավայրերի, կազմակերպվող միջոցառումների և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ:

Շարունակական բնույթ է կրելու Երևան քաղաքի արձանների և հուշարձանների, այգիների և հրապարակների կահավորումը եռալեզու տեղեկատվական վահանակներով՝ հագեցած QR կոդերով: Հուշարձանների մասին տեղեկատվությունը կմատուցվի նաև աուդիո տարբերակով՝ տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար:

Կգործարկվեն երկու տարբեր երթուղիներ, ըստ որոնց՝ զբոսաշրջիկները հնարավորություն կունենան ծանոթանալ Երևան քաղաքի զբոսաշրջային վայրերի շուրջ 80 տոկոսին՝ ներառելով գրեթե բոլոր վարչական շրջանները: Աուդիոտուրը կմատուցվի մի շարք լեզուներով:

Կստեղծվի Երևանի զբոսաշրջային միասնական քարտ, որը հնարավորություն կընձեռի զբոսաշրջիկներին այցելել քաղաքի տարբեր թանգարաններ, զբոսաշրջային, ժամանցային վայրեր զգալի զեղչերով և օգտվել քաղաքի տրանսպորտից:

Առաջիկա 5 տարիներին ավելացվելու են Երևան քաղաքում կազմակերպվող զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող փառատոնների թիվը: Հայտարարվելու են փառատոնների իրականացման լավագույն գաղափարների ներկայացման մրցույթներ:

Կակտիվացվի Երևանի քույր և գործընկեր քաղաքների հետ համագործակցությունը, փախադարձաբար կկազմակերպվեն մշակույթի օրեր, զբոսաշրջային փոխայցելություններ:

Համայնքի և մասնավոր ոլորտի կապը ամրապնդելու, համագործակցությունը ակտիվացնելու, առկա խնդիրները լուծելու նպատակով կստեղծվեն սպասարկման ոլորտի տարբեր միություններ և ասոցիացիաներ, ինչը հնարավորություն կտա համատեղ լուծել զբոսաշրջությանն առնչվող խնդիրները, ինչպես նաև լավարկել ոլորտի նկատմամբ վերահսկողությունը:

Քաղաքի զբոսաշրջային պոտենցիալի զարգացման նպատակով կստեղծվեն նոր ուղղություններ տարբեր թիրախային խմբերի համար:

Նախատեսվում է մունիցիպալ կամ զբոսաշրջային հարկատեսակի գործադրում, որը կիրառվում է աշխարհի տարբեր քաղաքներում: Հարկատեսակի կիրառումը հնարավորություն կտա համայնքին ավելացնել զբոսաշրջության ոլորտին անհրաժեշտ ռեսուրսները, համապատասխանաբար բարելավել ոլորտը և հոգալ զբոսաշրջիկների կարիքները:

Զբոսաշրջությունը որպես մասնագիտություն ընտրած ուսանողներին մայրաքաղաքի զբոսաշրջության զարգացման ծրագրերում ներգրավելու նպատակով՝ նախատեսվում է հուշագրերի կնքում՝ զբոսաշրջային ֆակուլտետներ ունեցող տարբեր ԲՈՒՀ-երի հետ:

Համաշխարհային զբոսաշրջության մեջ մարտահրավեր է զբոսաշրջության կայուն զարգացումը, շրջակա միջավայրի վրա տուրիզմի բացասական ազդեցության կրճատումը, «կանաչ տուրիզմի» խթանումը, զբոսաշրջության ոլորտում անցումը արևային էներգիայի օգտագործմանը, թափոնների վերամշակումը ոլորտի շահառուների կողմից: Երևանի համար ևս մարտահրավեր է տուրիզմի կայուն զարգացումը: Այդ նպատակով նախատեսվում է էկոլոգիական տուրիզմի խթանումը, հյուրանոցային տնտեսության օբյեկտների հետ համագործակցությունը՝ անցում կատարել արևային էներգիայի օգտագործմանը, բնության ռեսուրսների խնայողությանը: Քննարկվում է տեղական «էկո պիտակների» մշակման և ոլորտի շահառուներին տրամադրման ծրագիրը՝ սահմանված չափանիշներին համապատասխանության դեպքում:

ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ													
	Չ/Մ	**Աջ ափ նյակ**	**Ավա ն**	**Ար աբ կիր**	**Դավ թա շեն**	**Էրե բունի**	**Կեն տրոն**	**Մալ ա թիա-Սեբա ս տիա**	**Նոր Նորք**	**Նորք - Մա րաշ**	**Նու բա րաշեն**	**Շեն-գա վիթ**	**Քանա քեռ-Զեյ թուն**
Բնակչություն	հազ. մարդ	111.5	53.7	114.9	44.2	130.6	127	142.1	134.8	12.2	10.4	142.2	75.3
Փողոցների երկարություն	կմ	116.76	55.4	86.1	71.3	112	106	110.2	87.4	33.6	22.9	147.7	68.6
Բազմաբնակարան շենքեր	հատ	448	257	756	195	257	701	592	708	26	36	656	372
Վերելակներ	հատ	367	381	622	415	206	581	1002	620	26	6	299	270
Վթարային շենքեր	հատ	122	1	-	-	13	4	1	4	-	0	48	3
Առևտրի և սպասարկման փոքր և միջին օբյեկտներ	հատ	1200	537	2425	157	879	1694	1223	1138	84	52	1402	312
Շուկաներ	հատ	-	-	4	1	1	3	7	3	-	1	3	-
Հյուրանոցներ	հատ	8	10	23	10	21	81	8	13	7	0	17	8
Հանգստի գոտիներ	հատ	8	28	5	3	4	16	9	23	-	7	5	6
Բակային խաղահրապարակներ	հատ	144	68	101	68	66	72	141	145	5	18	105	75
Նախադպրոցական հաստատություններ	հատ	16	7	13	5	12	21	22	22	4	2	21	15
Հանրակրթական դպրոցներ	հատ	20	8	20	6	21	27	24	20	4	2	29	9
Երաժշտական դպրոցներ	հատ	2	-	2	-	1	2	1	1	1	1	2	1

Մարզադպրոցներ	հատ	2	1	5	1	1	2	4	4	2	1	4	2
Արվեստի դպրոցներ	հատ	1	1	0	1	1	1	2	1	-	0	1	2
Գրադարաններ	հատ	1	1	2	1	4	1	1	1	-	1	4	1
Սպասարկվող կանաչապատ գոտի	հա	68	27	59.43	23	16	45	89.1	65.2	-	4	30.25	60
Առողջապահական հիմնարկներ	հատ	5	3	-	-	5	38	1	1	3	1	1	6
Մասնավոր առողջապահական հիմնարկներ	հատ	35	1	24	4	2	29	70	30	4	3	42	33
Պոլիկլինիկա	հատ	2	1	3	1	4	3	4	2	1	2	7	2

Երևանն ունի 12 վարչական շրջան (Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն), որոնց շնորհիվ արդյունավետորեն իրականացվում է համաչափ զարգացման քաղաքականությունը:

Զբաղեցրած տարածքով վարչական շրջաններից ամենամեծը Էրեբունին է՝ 4755 հա տարածքով, այնուհետև՝ Շենգավիթը 4063 հա տարածքով, Աջափնյակը՝ 2590 հա, Մալաթիա-Սեբաստիան՝ 2523 հա, իսկ ամենափոքրերն են՝ Նորք Մարաշը՝ 469 հա, Դավթաշենը՝ 648 հա և Ավանը՝ 714 հա:

Գծապատկեր 1. Երևանի վարչական շրջանների տարածքների տեսակարար կշիռը՝ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ



Քաղաքի բնակչության մեջ համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունեն Շենգավիթ (142.2 հազ.), Մալաթիա-Սեբաստիա (142.1 հազ.), Նոր Նորք (134.8 հազ.) և Էրեբունի (130.6 հազ.) վարչական շրջանները, իսկ ամենափոքր ցուցանիշները բաժին են ընկնում Նուբարաշեն (10.4 հազ.), Նորք Մարաշ (12.2 հազ.) և Դավթաշեն (44.2 հազ.) վարչական շրջաններին:

Գծապատկեր 2. Երևանի բնակչության տեսակարար կշիռը՝ ըստ վարչական շրջանների՝ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ



Վարչական շրջաններից յուրաքանչյուրն ունի իր հիմնախնդիրները և դրանց լուծմանն ուղղված զարգացման տեսլականը:

Շինարարության և բարեկարգման ոլորտում, շրջակա միջավայրի բարելավման և առկա խնդիրների վերացման, բնակիչների համար ապահով, մաքուր և հարմարավետ միջավայրի ապահովման, ինչպես նաև տրանսպորտի երթևեկությունն ավելի հարմարավետ և անվտանգ դարձնելու նպատակով առաջիկա հինգ տարիների ընթացքում իրականացվելու են

ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման և պահպանման, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցերի վերանորոգման, գազի խողովակաշարերի կառուցման և վերակառուցման, հենապատերի և աստիճանների հիմնանորոգման, մայրուղիների և փողոցների վերակառուցման և հիմնանորոգման, բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների, մուտքերի վերանորոգման, եզրաքարերի, մայթերի և միջբակային տարածքների մասնակի և կապիտալ վերանորոգման, գեղարվեստական սալիկների տեղադրման, կախովի պատշգամբների ընթացիկ վերնորոգման, բակերի, բակային տարածքների ընթացիկ նորոգման և հիմնանորոգման, հանգստի, զբոսայգիների և մինի ֆուտբոլի դաշտերի կառուցման և պահպանման, շենքերի գեղարվեստական լուսավորման և արտաքին լուսավորության ցանցի կառուցման, հուշարձանների վերանորոգման և պահպանման, քաղաքային կահավորանքի վերանորոգման և ավելացման և մանկապարտեզների վերանորոգման և հիմնանորոգման համապատասխան ծրագրեր:

2024-2028թթ. բոլոր վարչական շրջաններում սոցիալական կարիքների գնահատման արդյունքում հայտնաբերված կարիքավոր բնակիչների, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների, բազմազավակ, երիտասարդ և այլ ընտանիքների կենսամակարդակի բարելավման և հասարակական կազմակերպություններին աջակցության նպատակով մշակվելու և իրականացվելու են սոցիալական աջակցության տրամադրման թիրախային ծրագրեր:

Բոլոր վարչական շրջաններում առանձնահատուկ կարևորություն է տրվում նաև կրթական, մշակութային և սպորտային ոլորտներին առնչվող ծրագրերի և միջոցառումների իրականացմանը: Մասնավորապես, մշակութային ժառանգության պահպանման և սերունդներին փոխանցման, ազգային արժեհամակարգի շարունակական պահպանման, սպորտային կյանքի և առողջ ապրելակերպի խրախուսման, ինչպես նաև կրթության որակի և կրթօջախների արդիականացման, ավելի ուսումնառու, նպատակասլաց և ժողովրդավար երիտասարդներ ունենալու նպատակով 2024-2028թթ. իրականացվելու են կրթօջախների, մարզական և մշակութային հաստատությունների շենքերի պայմանների բարելավման, գրադարանների արդի տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռքբերման և գրականության համալրման, մարզական օրացուցային պլանով նախատեսված սպորտային միջոցառումների իրականացման, մշակութային, պետական և ազգային տոների զանգվածային միջոցառումների կազմակերպման և այլ ազգային մշակութային միջավայրին նպաստող ծրագրեր:

Շրջակա միջավայրի բացասական ազդեցության մեղմման և օդի աղտոտվածության մակարդակի նվազեցման նպատակով 2024-2028թթ. իրականացվելու են ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների ավելացման, ոռոգման ցանցերի ստեղծման և վերակառուցման, զբոսայգիների և պուրակների վերակառուցման, սիզամարգային

տարածքների ստեղծման և վերականգման, ինչպես և ծառերի և թփերի տնկման լայնածավալ միջոցառումներ:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2024-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 83-րդ հոդվածի՝ Երևանի զարգացման ծրագիրը փաստաթուղթ է, որը բովանդակում է Երևանի սոցիալ-տնտեսական վիճակը, ինչպես նաև զարգացման հիմնական ուղղությունների, տարածական պլանավորման և ենթակառուցվածքների ընդհանուր զարգացման վիճակի վերլուծությունն ու կանխատեսումները:

2024-2028 թվականների հնգամյա ծրագիրը կազմվել է նոր ձևաչափով, կառուցվածքով և մոտեցումներով, որն իրենից ներկայացնում է քաղաքի զարգացման տեսլականը առաջիկա 5 տարիների համար: Այստեղ նախանշված են չորս հիմնական գերակա ուղղություններ, դրանք են՝ Երևանը կյանքի համար հարմարավետ քաղաք, մարդկային ներուժի զարգացման և հնարավորությունների իրագործման քաղաք, կայուն և տնտեսական զարգացման քաղաք: Այս ուղղություններից յուրաքանչյուրն ունի ենթաբաղադրիչներ, որտեղ սահմանվում են այն ոլորտային խոշոր ծրագրերը, որոնց իրականացմամբ կունենանք առավել հարմարավետ, տնտեսապես կայուն, զարգացման և կենսագործունեության հնարավորություններ ունեցող քաղաք:

Այսպես՝ մայրաքաղաքն առավել բարեկեցիկ և հարմարավետ ենթակառուցվածքներով դարձնելու նպատակով նախատեսվում է կառուցել Երևան քաղաքը Զվարթնոց միջազգային օդանավակայանին կապող այլընտրանքային ճանապարհ, որը օդանավակայանը կկապի Բաբաջանյան-Աշտարակ հատվածին, կնախագծվի նոր կամուրջ Հրազդանի կիրճի վրայով, որը կկապի Թբիլիսյան և Եղվարդի խճուղիները՝ զգալիորեն թեթևացնելով Արաբկիր և Դավթաշեն վարչական շրջանների երթևեկության ծանրաբեռնվածությունը: Կիրականացվեն տարեկան 50 կմ միջին նորոգման աշխատանքներ, արդյունքում կնորոգվի Երևանի ամբողջ 271 կմ ճանապարհացանցը:

Կարևորելով մայրաքաղաքում գործող երթուղային ցանցի արդյունավետության բարձրացման և նոր երթուղային ցանցի ստեղծման անհրաժեշտությունը՝ ներդրվելու է հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանց և նոր միասնական տրանսպորտային համակարգ՝ վերանայելով երթուղիները, նախատեսելով նոր, ժամանակակից շարժակազմերի ձեռքբերում, միասնական տոմսային էլեկտրոնային համակարգի ներդրում, զեղչային համակարգերի կիրառում, որը կբերի ուղևորների սպասարկման որակի զգալի բարձրացման:

Գործող կանգառասրահները փոխարինվելու են նոր, «խելացի» լուծումներով վերազինված կանգառասրահներով:

Երևանի Կասկադ համալիրի չկառուցապատված վերնամասում՝ ավելի քան 8 հա տարածքում, ավարտին են հասցվելու Կասկադ համալիրի կառուցման աշխատանքները: Տարածքում նախատեսվում են մշակութային նշանակության կառույցներ, հանրային գոտիներ, հետիոտն ճեմուղի դեպի մատենադարան:

Նախատեսված միջոցառումների իրականացմամբ այլևս չեն լինի վթարային վիճակում գտնվող վերելակներ, վերանորոգման կամ հիմնանորոգման կարիք ունեցող համայնքային մանկապարտեզներ: Վարչական շրջաններում, ընդհանուր առմամբ կկառուցվեն 14 նոր համալիր մարզաձևերի մարզադպրոցներ, որոնցում ընդգրկված կլինեն խաղային, մենապայքարային և կիրառական մարզաձևեր:

Մեծածավալ աշխատանքներ են իրականացվելու թվայնացման ոլորտում, մասնավորապես ներդրվելու է քաղաքացիներին ավելի քան 150 ծառայությունների մատուցման միասնական հարթակ և մեքենայացված ուսուցման գործիքներով հագեցված հարմարավետ բջջային հավելված: Ծառայությունները ներառելու են հարկեր/տուրքերի վճարումներից, բոլոր տեսակի թույլտվությունների ստացումից մինչև երեխայի՝ պարզեցված կարգով մանկապարտեզում հերթագրվելը:

Շարունակվելու է կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման, հարմարվողականության, էներգաարդյունավետության, վերականգնվող էներգիայի կիրառմանն առնչվող միջոցառումների իրականացումը, որոնք ուղղված են Երևանի քաղաքային ենթակառուցվածքների էներգաարդյունավետության բարելավման և շրջակա միջավայրի պահպանության երկարաժամկետ ռազմավարության իրականացմանը՝ նպատակ ունենալով նվազեցնելու CO2-ի արտանետումները:

Կանաչ տարածքների բարելավման և ընդլայնման, մթնոլորտային օդի աղտոտման նվազեցման նպատակով առաջիկա հինգ տարիների ընթացքում կիրականացվեն մի շարք ծրագրեր:

Դալմայի այգիներում առկա 230 հա-ից ավել տարածքում հիմնվելու է նոր քաղաքային այգի՝ բացառելով որևէ կառուցապատում այդ տարածքում, իսկ Նորքի նախկին այգիներում առկա շուրջ 10 հա տարածքում տնկվելու է անտառ՝ ստեղծելով բուֆերային գոտի:

Վերականգնվելու և արդիականացվելու է Երևանի ոռոգման համակարգի կեսից ավելին՝ շուրջ 120 կմ նոր ցանցի անցկացմամբ, իսկ երկարաժամկետ հեռանկարում արդիականցվելու և հնարավորինս ավտոմատացվելու է ոռոգման ամբողջ ցանցը՝ այն հասցնելով շուրջ 500 կմ-ի:

Երևանյան լճի և Հրազդան գետի ջրերի մաքրությունը կենցաղային աղբից և կոյուղաջրերից ապահովելու նպատակով Հրազդան գետի վրա կտեղադրվի ևս երկու աղբաորսիչ հարմարանք, կկառուցվի կոլեկտոր:

Այսպիսով հնգամյա ծրագրի նախագիծը 2023թ. նոյեմբերի 9-ին տրամադրվել է Երևանի քաղաքապետի՝ 2023թ. նոյեմբերի 6-ի «Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի անհատական կազմը հաստատելու և Երևանի քաղաքապետի 2019 թվականի հունիսի 7-ի հ. 1881-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ. 3637-Ա որոշմամբ

հաստատված խորհրդի անդամներին, որոնք նոյեմբերի 16-ին հրավիրված նիստի ընթացքում կողմ են քվեարկել (17 կողմ, 0 դեմ) ծրագրի նախագիծը հանրային քննարկման ներկայացնելուն:

Հանրային քննարկման հրապարակայնությունը, մատչելիությունը և թափանցիկությունը ապահովելու նպատակով հանրային քննարկման մասնակցության հրավերը հրապարակվել է մամուլում և Երևան քաղաքի պաշտոնական կայքում: Միաժամանակ ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական (www.e-draft.am) կայքում, ինչպես նաև Երևան քաղաքի պաշտոնական (www.yerevan.am) կայքում հրապարակվել է ծրագրի նախագծի էլեկտրոնային տարբերակը:

2023 թվականի դեկտեմբերի 1-ին Երևանի քաղաքապետարանում կազմակերպվել է հանրային քննարկում՝ հանրային բաց լսումների եղանակով, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան ամփոփաթերթ: Երևանի քաղաքապետին կից գործող Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի դեկտեմբերի 4-ին կայացած նիստում ամփոփվել են հանրային քննարկման արդյունքները: Նիստին ներկա խորհուրդի անդամների ձայների մեծամասնությամբ տրվել է դրական եզրակացություն Երևանի զարգացման 2024-2028 թվականների հնգամյա ծրագրի նախագիծը Երևանի ավագանուն ներկայացնելուն:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը, ինչպես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 83-րդ հոդվածը, համաձայն որի Երևանի քաղաքապետը տարեկան բյուջեի նախագիծը մշակելիս հաշվի է առնում Երևանի բնակչության կենսական շահերը, Երևանի զարգացման ծրագրերը, ինչպես նաև առկա ռեսուրսները՝ որոշման նախագծով Երևանի ավագանու հաստատմանն է ներկայացվում Երևանի զարգացման 2024-2028 թվականների հնգամյա ծրագրի նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Տ.ԱՎԻՆՅԱՆ